

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### ՊԻՏԻ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՏԵՐ ԿԱՆԳՆԻԼ ՄԵԶԻ ՑՈՅՑ ՏՐՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ընդհանուր ակնարկ մը 2007 տարեշրջանի միջազգային լրատուական քատերաքեմին վրայ, ցոյց պիտի տայ իր նախնախնայ չունեցող արարներ, որոնք անմիջականօրէն կապակցուած են Օսմանեան Կայսրութեան, հայոց դեմ իրագործած Ցեղասպանութեան՝ արդի թուրքիոյ կողմէ մի անգամը միշտ ձԱՆԱԶՄԱՆ հրամայականին հետ: Այդ դիտարկումը, նաեւ, կը վերաբերէ հարցադրումներ, որոնք կ'առնուին հայ ժամանակակից իրականութեան հետ: Թէ՛ ի՞նչ կաղապարի ձԱՆԱԶՄՈՒՄ մը կրնայ ըլլալ ան: Թէ՛ հայութիւնը պատրաստ է քայլ պահելու այդ գործընթացին հետ: Թէ՛ հայոց հաշույն մշակուած ի՞նչ բնոյթի սահմանում մը կրնար ունեցած ըլլալ ան, հաշուի առնելով Ատլանտեան Ուխտի դաշնակից թուրքիան: Թէ՛ այդ հանգամանքը հաշուի առնելով բանաձեւուած ձԱՆԱԶՄՈՒՄ մը պիտի բաւարարէ՞ր իր պատմական հողերէն արմատախիլ դարձած, մէկ ու կէս միլիոն նահատակ տուած, կոթողային մշակոյթի եւ կայսրական անշարժ եւ շարժուող հարստութիւն ետին թողած հայ պահանջատէր ժողովուրդին: Իրողութիւններ եւ հարցադրումներ, որոնք մասին պիտի արժէր մտածել լրջօրէն:

Օսմանեան Կայսրութեան կողմէ Հայոց դեմ ներքին արագործուած Ցեղասպանութեան հանդէպ, այսպէս կոչուած ֆրիստոնեայ, այլ ֆաղափակիք աշխարհի ցոյց տուած երկար տասնամակնկերու վրայ ծառայած անտարբեր կեցուածքը յեղաշրջում մը կ'արձանագրէր ներկայիս: Հայ ժողովուրդը բնաջնջելու Օսմանեան կայսրութեան 1915-20 թթ. անմահադէպ, եւ աշխարհով մէկ ծանօթ Ցեղասպանութիւնը անպատասխանատու եւ անսկզբունք ընթացքի, փաստօրէն, առիթ ծառայած էր այլ ցեղասպանութիւններու իրագործման: Սկսած 1937-ի Ֆաշիստական Գերմանիայէն մինչեւ մեր օրերու Ռուստա, տեղի ունեցան նոր ցեղասպանութիւններ:

Անպատիժ մնալու այդ ապահովութիւնը պատմաւոր դարձած էր բազմամիլիոն անմեղ մարդոց բնաջնջումին: Տարակոյս չկար, եթէ

Շարք էջ 18

### «ՆԻԻ ԵՈՐՔ ԹԱՅՄՁ»-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ ԿՐ ՔՆՆԱԴԱՏԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ ԹՈՒՐԹԻՈՅ ԵՒ ՄԱԿ-Ի ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԸ

Ամերիկայի ամենէն ազդեցիկ թերթը նկատուող «Նիւ Եորք Թայմզ» իր Ապրիլ 13-ի խմբագրականով եկաւ խիստ բառերով քննադատելու թրքական կառավարութեան վերաբերմունքը Հայկական Ցեղասպանութեան հարցով: Խմբագրականի շարժառիթը եղած է անցեալ շաբթուայ ընթացքին ՄԱԿ-ի կեդրոնատեղիէն ներս տեղի ունենալիք եւ Ռուսաստանի ցեղասպանութեան նուիրուած ցուցահանդէսի յետաձգումը՝ Թուրքիոյ ներկայացուցիչներու բողոքներուն պատճառաւ:

Խմբագրականը կը յայտնէ, որ փորձելով լռեցնել Հայոց Ցեղասպանութեան մասին խօսակցութիւնները՝ թուրքերը աւելի մեծ ուշադրութեան կ'արժանացնեն այդ հարցը:

«Տարօրինակ է, որ Թուրքիոյ առաջնորդները մինչեւ հիմա չեն գիտակցած, որ ամէն անգամ, երբ անոնք կը փորձեն գրաքննել Հայոց Ցեղասպանութեան շուրջ քննարկումները, անոնք միայն աւելի մեծ ուշադրութեան կ'արժանացնեն այդ հարցը եւ այժմու ժողովրդավարական Թուրքիան կը կապեն անցեալի ոճրագործութեան հետ», - կը գրէ «Թայմզ» խմբագրականը:

«Թուրքիա երկար ժամանակէ

ի վեր կը փորձէ հերքել Հայոց Ցեղասպանութիւնը: Նոյնիսկ արդի Թրքական հանրապետութեան կողմէ, որ սպանութիւններու հետ առնչութիւն չունի, «ցեղասպանութիւն» բառի օգտագործումը կատարուածի մասին կը նկատուի լուրջ յանցանք: Եւ աւելի ամօթալի է, որ ՄԱԿ-ի պաշտօնակները Թուրքիոյ պահանջներուն առջեւ ընկրկելով կը յետաձգեն ՄԱԿ-ի կեդրոնատեղիէն ներս նախատեսուած ցուցահանդէսը՝ Ռուսաստանի ցեղասպանութեան 13-րդ տարելիցին առթիւ, որովհետեւ այնտեղ նշուած են հայերու զանգուածային սպանութիւնները»:

Շարունակելով թերթը կը յայտնէ որ, Անգարային զայրացուցած է այն նախադատութիւնը, ուր կը բացատրուի, թէ ինչպէս ցեղասպանութիւնը միջազգային օրէնքով ճանչցուած է որպէս ոճրագործութիւն: «Առաջին աշխարհամարտէն յետոյ, որու ընթացքին Թուրքիոյ մէջ սպանուեցաւ մէկ միլիոն հայ, լեհ փաստաբան Ռաֆայէլ Լեմկին քաջալերած է Ազգերու Լիկային ճանչնալ բարբարոսութեան ատիճանի հասնող ոճիրները որպէս միջազգային

Շարք էջ 4

### ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏՐ ԿՐ ՊԱՐԱՆՁԷ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կեդրոնական վարչութեան ատենակէտ Ընկ. Սեդրակ Աճէմեան այս օրերուն գտնուելով Հայաստան, Երեքշաբթի Ապրիլ 17-ին «Փաստարկ» ակումբէն ներս հանդիպում ունեցաւ մամուլ, հեռատեսիլի եւ ռատիոյ մեծ թիւով լրագրողներու հետ: Հանդիպման ընթացքին Կուսակցութեան ատենակէտը պատասխանեց շարք մը հարցերու, որոնք կը վերաբերէին Հայաստանի քաղաքական կեանքին եւ սփիւռքեան խնդիրներու:

Ընկ. Աճէմեան յայտնեց, որ Երեւան եկած է, բարոյական աջակցութիւն ցուցաբերելու Հայաստանի ընկերներուն, որոնք կը պատրաստուին յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն: Ան շեշտեց որ ՍԴՀԿ-ն մնայուն կերպով իր դժգոհութիւնը արտայայտած է Հայաստանի մէջ մինչեւ օրս կայացած ընտրութիւններու անկատարութեան կապակցու-



Ընկ. Սեդրակ Աճէմեան ելոյթ կ'ունենայ Երեւանի մէջ

թեամբ: Խորհրդարանական նախորդ ընտրութիւններուն վերաբերեալ միջազգային կազմակերպութիւններու գնահատականները Ընկ.

Շարք էջ 4

### ԱՐԱ ՆԱԾԱՐԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՒ ԿԼԵՆՏԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Երկուշաբթի, Ապրիլ 16-ին Կլենտէլի քաղաքապետական խորհուրդը սկսաւ իր նոր տարեշրջանը եւ առաջին հերթին միաձայնութեամբ ընտրեց Արա Նաճարեանը որպէս քաղաքապետ:

Քաղաքապետի պաշտօնը կը վարեն Խորհուրդի հինգ անդամները հերթաբար, մէկ տարուայ ժամանակաշրջանով: Արա Նաճարեան առաջին անգամ ըլլալով ընտրուեցաւ այդ պաշտօնին:

Ապրիլ 3-ի ընտրութիւններու լոյսին տակ քաղաքապետական Խորհուրդը կորսնցուց իր հայկական մեծամասնութիւնը, երբ չորս հայ թեկնածուներէն ոչ մէկը հասաւ յաջողութեան:

Ուշագրաւ էր նախկին քաղաքապետ Ռաֆի Մանուկեանի պարտութիւնը: Ան անցնող 8 տարիներուն որպէս քաղաքապետական Խորհուրդի անդամ վարած ըլլալով հատուածական քաղաքականութիւն կորսնցուցած էր Հայ ընտրողներու համակրանքը:

### ՀԱՅԱՍՏԱՆ ԸՐԱԿՐՈՒԱԾ ԶԷ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԸՒՄԱՔԻՆ

Այս տարուայ Նոյեմբերին Մայիլի մէջ կայանալիք ժողովրդավար երկիրներու հաւաքին հրաւեր չստացող երկիրներու շարքին է նաեւ Հայաստան:

Միացեալ Նահանգներու նախաձեռնութեամբ ստեղծուած ժողովրդավարութիւններու համայնքի հաւաքին հրաւիրուած են աշխարհի 100 երկիրներու արտաքին գործոց նախարարները: 18 երկիրներ, ուր ժողովրդավարութեան առումով յառաջընթաց կը նկատուի, հրաւիրուած են որպէս դիտորդներ:

«Հայաստան, Պահարէյն եւ Արեւելեան Թիմորը նոյնպէս այն երկիրներու շարքին են, որոնք իշխանութիւններու նուիրուածութիւնը ժողովրդավարութեան կասկածի տակ է», - «Ռոյթըրզ» մամուլի գործակալութեան ըսած է Մասնագէտներու միջազգային յանձնախումբի ներկայացուցիչը:

Մեր ժողովուրդը երկիրներու շարքին են նաեւ Ռուսաստան, Իրաք, Վենեզուելա եւ այլ երկիրներ:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 92-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԾԱՌԿՆԵՐՈՒ ԶԵՏԵՂՈՒՄ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ԵՂԵՌՆԻ ՅՈՒՇԱՐԶԱՆԻ ՄՕՏ**

Երեքշաբթի, Ապրիլ 24-ի Առաւօտեան ժամը 10-էն Սկսեալ

**ԸՆՁՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՍ**

**ԻՆՉՈՒ ՅԱՆԿԱՐԾ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ ԿԱՆԳՆԵՑ ԻՆՉ ՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ԲԵՄԱԴՐԵԼՈՒ ԱՆՇՐԱԺԵՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՋ**

Մի տեսակ գարմանալի է, որ Հայաստանի խորհրդարանի ընտրութեան ժամանակահատվածում Ռուսաստանն ու Միացեալ Նահանգները իրար հետ չեն կուռում մեր բազմազարչար 29 հազար քառակուսի կիրոմետրն իրենցով անելու համար: Դա նոյնիսկ վիրաւորական է մեր ազգային արժանապատուութեան համար: Միթէ մենք նրանցից ոչ մէկին պէտք չենք, կամ պէտք չենք այնքան, որ նրանք իրար հետ կենաց ու մահու կռիւ տան Հայաստանի համար: Բարեբախտաբար, քանի դեռ չէր հասցրել անպէտքութեան զգացումն ամբողջութեամբ պարուրել Հայաստանը, Ռուսաստանը ակտիւացրեց իր միջամտութիւնը Հայաստանի ներքաղաքական կեանքին: Կրեմլը փաստորէն վերջնականապէս որոշեց, որ Հայաստանի խորհրդարանի ընտրութեանն աջակցելու է Սերժ Սարգսեանին եւ Հանրապետական կուսակցութեանը: Այդ մասին իհարկէ «Վրեմեան» պաշտօնական հաղորդագրութիւն չի տարածել, այլ միայն ցոյց է տուել Պուտինի հետաքրքրութիւնը Հայաստանի իրավիճակի հանդէպ: Բայց եթէ դա անգամ բաւարար չհամարենք, ապա կասկածից վեր է, որ Լաւրով եւ Իվանով Սերժէյները միասին վերցրած արժէն «Վրեմյայի» պաշտօնական խորհրդակցի հատուածը: Իսկ Լաւրովը Հայաստանում յայտարարեց, որ Ռուսաստանի ոչ պաշտօնական տեսակէտը համընկնում է պաշտօնականի հետ: Իսկ ոչ պաշտօնական տեսակէտն արտայայտուած է այդ երկրի մամուլի եւ քաղաքագիտական կլոր սեղանների միջոցով, ուր Սերժ Սարգսեանը համարուած է Հայաստանի նախագահի միակ «ժառանգորդ»:

Սերժէյ Իվանովին էլ եկաւ ու քաջալերեց Սերժ Սարգսեանին, որ «Մոսկուան այս անգամ արցունքներին հաւատացել» է եւ չի թողնի, որ բանը բանից անցնի ու Հայաստանը դառնայ ուղղով, որով որ կը ցանկանար ասենք Բուշը, կամ թէկուզ Դանիլովիչը:

Բայց Սերժ Սարգսեանի համախոհներն ուրախանալու, իսկ ընդդիմախօսներն էլ մտահոգուելու մեծ պատճառներ երեւի թէ չունեն: Այսինքն, գուցէ նրանք չպէտք է շտապեն յաղթանակ տօնել, կամ ձախողումից յետոյ գլուխը թաղել մոխրի մէջ: Ռուսաստանն իր ընտրութիւնը լաւ օրից չի կատարել: Որեւէ մէկին չպաշտպանել նա բնականաբար չէր կարող: Իսկ Ռոբերդ Քոչարեանն այդպէս էլ չկարողացաւ ներկայացնել մէկին, ով Ռուսաստանի համար այլընտրանք կը լինէր Սերժ Սարգսեանին: Մինչդեռ ուսանելը բաւական ժամանակ սպասում էին: Եւ եկաւ մի պահ, երբ սպասելն արդէն կը լինէր ձակատագրական, առաւել եւս, որ յանկարծամահ եղաւ նաեւ վարչապետ Անդրանիկ Մարգարեանը: Ռուսաստանը զգաց, որ նրա մահից յետոյ Հայաստանի իշխանական բուրգում սկսելու է արտաքինապէս անտեսանելի, բայց խորքում բաւական վճռական եւ դինամիկ մի պայթար: Հաշուի առնելով Հայաստանի իշխանական թեւերի ուժերի յարաբերակցութիւնը, Ռուսաստանը հասկացաւ, որ այդ պայթարում որեւէ մէկը արագ յաղթանակ չի տանելու, իսկ ահա իշխանութիւնն ամբողջութեամբ թուլանալու է հաստատ: Իսկ դա մեծացնում էր հաւանականութիւնը,

որ խորհրդարանի ընտրութեանը Հայաստանում կը յաջողէր այն, ինչ տեղի ունեցաւ Վրաստանում: Դրա համար էլ Ռուսաստանը որոշեց բացառապէս աջակցել կողմերից մէկին, որպէսզի նա կարողանայ դրութիւնն արագ վերցնել իր ձեռքը, քանի որ ներքին անհամաձայնութիւններից քայքայուող իշխանութիւնն այլեւս չէր ունենայ արտաքին վտանգին աղեկվատ արձագանքելու ներուժ: Այն համախմբելը կը լինէր բաւական դժուար, եթէ հաշուի առնենք, որ Մայիսի 12-ին մօտենալուն զուգահեռ ներքինապետական հակասութիւններն աւելին սրուելու: Վերջին հաշուով կանչուածները շատ են, իսկ ընտրուածները քիչ են լինելու: Մինչ այժմ Հայաստանի իշխանութեան ուժը եղել է միատարրութիւնը: Ներկայումս կան դրան կասկածելու բազմաթիւ օրինակներ: Եւ որքան էլ որ մերձիշխանական ուժերը կարծեն, թէ այդ հակասութիւններն իմիտացիա են հանրութեանը մոլորեցնելու համար, այդուամենայնիւ որեւէ մէկը չի էլ կարող վստահ լինել, որ դրանք իրական չեն: Ի վերջոյ, բոլորը տեսնում են եւ հարց տալիս իրենց, թէ ինչու յանկարծ այսքան տարի առանց իմիտացիայի իշխանութիւն պահող վարչակարգը կանգնեց ինչ որ ներկայացուցաներ բեմադրելու անհրաժեշտութեան առաջ: Իսկ կասկածն արդէն իսկ յեղափոխութեան նախադրեալ է, եւ Ռուսաստանի համար կարեւոր է, թէ այդ յեղափոխութիւնն ինչ գոյնի կը լինի, որովհետեւ ընդդիմադիր դաշտը միշտ եղել է, եւ դեռեւս շարունակուած է մնալ այդ երկրի թուլութիւնը: Ռուսաստանը դասեր չբաղեց ոչ Վրաստանից, ոչ Ուկրաինայից: Այդ երկրներում Կրեմլը չունէր գործընկեր քիչ թէ շատ նշանակալից քաղաքական ուժ: Այդ քանից յետոյ Ռուսաստանը չփորձեց Հայաստանում գոնէ չկրկնել նոյն սխալը եւ աշխատել ազդեցիկ ընդդիմադիրների հետ: Ընդ որում, ազդեցիկ ոչ թէ հենց այդ ընդդիմադիրների կարծիքով, այլ հասարակութեան մէջ իրական աջակցութեան տեսանկիւնից: Իսկ եթէ չկան այդպիսիք, ապա երեւի թէ պէտք էր ստեղծել: Յամենայն դէպս դեռ ուշ չէ: Եթէ անհնար է փոխել բուն ընտրութեան վերաբերեալ կայացուած որոշումը, ապա ընտրութիւնից յետոյ թեւեւ դա ոչ միայն կարելի է անել, այլ նաեւ անհրաժեշտ է:

Խնդիրն այն է, որ Ռուսաստանի համար ձեռնտու չէ Հայաստանում պատուար ունենալ միայն Սերժ Սարգսեանին: Եւ եթէ առաջիկայ տարիներին այդպէս շարունակուի, եւ Ռուսաստանն ընդդիմութեան կամ իշխանութեան դաշտում չստեղծի Սերժ Սարգսեանին ուժալ այլընտրանք, ապա երեւի թէ կարելի է վստահաբար ասել, որ մի քանի տարի անց Ռուսաստանը կը կանգնի ոչ թէ այլընտրանքի, այլ ընդհանրապէս նոր պատուարի որոնման անհրաժեշտութեան առաջ: Այն պարզ պատճառով, որ առանց այլընտրանքի գործող Սարգսեանը անկասկած աւելի ակտիւ է լինելու արեւմտեան ուղղութեամբ, ուր կայ մեծ մրցակցութիւն եւ հետ մնալու վտանգ:

**ՅԱԿՈՒ ԲԱՂԱԼԵԱՆ**  
«ԼՐԱԳԻՐ»

**ՔՈՉԱՐԵԱՆԻ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՆԻ ՏԵՂ ԴՆՈՂ ԶԿԱՅ**

1998 թուականից ի վեր, երբ Ռոբերդ Քոչարեանը զբաղեցրեց ՀՀ նախագահի պաշտօնը, Հայաստանում նոր թափ հաւաքեցին երկրում արձանագրուած աղմկայարոյց, այդ թուում՝ պետական պաշտօնեաների եւ հասարակութեանը յայտնի անձանց սպանութիւններն ու ֆիզիկական հաշուեյարդարները քաղաքական գործիչների, իրաւապաշտպանների նկատմամբ:

Այդ յանցագործութիւնների առնչութեամբ, ճիշդ է՝ ոչ բոլոր դէպքերում, բայց մօտ տասնեակի համող յանձնարարականներ էր տուել ՀՀ իրաւապահ մարմիններին՝ վերջիններից պահանջելով «արագ» կամ «սեղ» ժամկէտներում բացառապէս յանցագործութիւններն ու պատժել մեղաւորներին: Այդուհանդերձ, դատելով մեր կողմից արուած վիճակագրութիւնից, Ռոբերդ Քոչարեանի յանձնարարականների արդիւնաւէտութիւնը, մերձ ասած, այնքան էլ բարձր չի եղել, թէ 98-ից մինչ օրս ՆԳՆ կամ ՀՀ ոստիկանութեան մի քանի նախարարներ ու մի քանի գլխաւոր դատախազներ են փոխուել: Ասել է թէ՛ հայրենի իրաւապահները կա՛մ ի գորու չեն աղմկայարոյց յանցագործութիւններ բացառապէս, կա՛մ բացառապէս են, յետոյ պարտակում, որովհետեւ բացառապէս խոշոր հաշուով չի բխում իշխանութեան վերին էջերին շահից՝ էլի երկու պատճառով. կա՛մ յանցագործութեան կազմակերպման թելերը տանում են հենց այդ վերին էջերները, ինչի մասին գերադասուած է լուել, կա՛մ յանցագործութիւնը կազմակերպում ու հովանաւորում են հենց իշխանութեան վերին օղակները:

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան երկու նախընտրական շտաբների պայթեցումից յետոյ Հայաստանում շատ քչերն են հաւատում, որ Քոչարեանի յանձնարարականը իրաւապահ մարմիններին՝ «ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները հնարաւորինս սեղմ ժամկէտներում իրականացուած պայթիւնները բացառապէս, նաեւ առաջիկայում նման դրսեւորումները կանխելու համար» ի կատար կածուի, եւ շատերն են համարում, որ այդ յանցագործութիւնը եւս կը դատուի «չբացառապէսներ» թուին, որովհետեւ դա իշխանութիւններին ձեռնտու չէ: Յամենայն դէպս, Քոչարեանի որեւէ յանձնարարական 1998-ից ի վեր, որը վերաբերել է իշխանութեան կամ անձամբ իր ախոյեանների դէմ կատարուած յանցագործութիւնների բացառապէս, կա՛մ չի կատարուել, կա՛մ, իբր, կատարուել է, բայց կոնկրետ յանցագործութեան հետ կապ չունեցող մարդկանց այդ յանցագործութեան մէջ մեղադրելու գնով: Դա էլ, թեւեւ, կարող էր չլինել, եթէ միայն հատուկները դէպքերում Քոչարեանին պէտք չլինէր որեւէ մէկին դնել քաւութեան նոխազի դերում:

Այսպէս, 1998թ. ամռանը իր աշխատանքներում սպանուեց ՀՀ գլխաւոր դատախազ Հենրիկ Խաչատրեանը: Իրաւապահներն աշխատասենակում յայտնաբերեցին միանգամից երկու դիակ՝ գլխաւոր դատախազին ու տրանսպորտի դատախազ Արամ Կարապետեանին: Ռ. Քոչարեանն այդ դէպքի առնչութեամբ հեռուստատեսութեան նշեց, որ «համապատասխան իրաւապահ մարմիններին յանձնարարուած է շուտափոյթ բացառապէս»:

յայտել յանցագործութիւնը»: Իրաւապահներն էլ «բացառապէս» եւ պաշտօնապէս յայտարարեցին, որ Հ. Խաչատրեանին սպանել է Ա. Կարապետեանն ու ինքն էլ ինքնապաշտպան է եղել: Պաշտօնական յայտարարութեանը, իհարկէ, ոչ ոք այդպէս էլ չհաւատաց, բայց պաշտօնապէս համարուեց, որ յանցագործութիւնը բացառապէս է: Թէ ինչ արժէր այդ բացառապէսը՝ ակնյայտ էր:

Նոյն թուականի Դեկտեմբերին իր տան շքամուտքում սպանուեց ՊՆ փոխնախարար Վահրամ Խորխոռուսին: ՀՀ նախագահի պաշտօնը զբաղեցնողը դարձեալ յանձնարարականներ տուեց իրաւապահներին, բայց յանձնարարականն արդեն 9 տարի է անկատար է մնում:

2002-ի Դեկտեմբերին հայրական տան շքամուտքում սպանուեց Տիգրան Նաղդալեանը: Ռոբերդ Քոչարեանը յայտարարեց՝ «Իրաւապահ մարմիններին տրուած են յանձնարարականներ, իրականացուած են անհրաժեշտ միջոցառումներ: Ամէն ինչ կ'արուի, որպէսզի բացառապէս եւ պատժուեն այս ստոր յանցագործութեան հեղինակներն ու կատարողները»:

Յանցագործութիւնը «բացառապէս» ամբաստանելու աթոռին յայտնուեցին 3 դարաբաղցի երիտասարդ, մէկ գործակալ եւ Վազգէն Սարգսեանի կրտսեր եղբայր Արմէն Սարգսեանը: Համարուեց, որ այս յանցագործութիւնը եւս բացառապէս է, թէ ասարակութեան մի ստուար հատուած այսօր էլ վստահ է, թէ պատժուել են ո՛չ իրական յանցագործներն ու կազմակերպիչները:

2004թ. Մարտի 30-ին սափ-Շաբ-ը էջ 5

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԻԹ**  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԻԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail),  
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԲԱՐՈՋԱՐՇԱԻՆ ՍԿՍԵՑ ՀԱՆՐԱՀԱՒԱԲՈՎ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հայաստանեան ընդդիմութեան թե-  
րեւս ամենաարմատական ուժը՝  
նախկին վարչապետ Արամ Սարգս-  
եանի գլխավորած «Հանրապետու-  
թիւն» կուսակցութիւնը, նախընտ-  
րական քարոզարշաւը Ապրիլ օրը  
սկսեց մայրաքաղաքի Գարեգին  
Նժդեհի հրապարակում՝ հանրա-  
հաւաքով:

Կուսակցութիւնը ընտրութիւն-  
ների է գնում միանշանակօրէն  
յաղթելու պատրաստակամութեամբ.  
Հանրահաւաքի բանախօսները շեշ-  
տում էին. - «Մեր ստացած իւրա-  
քանչիւր ձայնի վրայ գրելու ենք  
«Ռոբերդ, հեռացիր» կարգախօ-  
սը»: Իսկ եթէ օրինականութիւնը  
«քուէատուփերով չհաստատուի՝ ժո-  
ղովրդական ընդվզում է լինելու»:  
«Ես ձեզանից մէկն եմ, ժողո-  
վո՛ւրդ: Մեր փոխարէն ոչ Արեւելք,  
ոչ Արեւմուտք չի անելու, ժողո-  
վո՛ւրդ», - դիմելով հաւաքուածնե-  
րին՝ ասաց Արամ Սարգսեանը: -  
«Սա մեր երկիրն է, ժողովո՛ւրդ:  
Սրա տէրը մենք ենք, ժողովո՛ւրդ»:  
Կուսակցութեան ղեկավարնե-  
րը յայտարարեցին, թէ իրենց հա-  
մար խորհրդարանական մանդատը  
«ժողովրդին իշխանութիւնը վե-  
րադարձնելու նպատակ ունի»:  
«Ասում են՝ ընդդիմութիւնը

ծրագիր չունի: Սուտ են ասում», -  
իր ելոյթում ասաց «Հանրապե-  
տութեան» ղեկավար անդամ, ներ-  
քին գործերի նախկին նախարար  
Եւ Երեւանի նախկին քաղաքապետ  
Սուրէն Աբրահամեանը: - «Բայց  
ծրագրային դրոյթները հրապա-  
րակ հանելուց առաջ այլ խնդիր  
ունենք... Ամենապայծառ գաղա-  
փարը սեփական երկրին տէր դառ-  
նալն է, ինչը կարելի է միայն  
իրականացնել այս յանցագործ ուե-  
ժիմը երկրից հեռացնելով»:  
Հնչեցուցեց նաեւ կուսակցու-  
թեան համոզմունքը, թէ Հայաստա-  
նում «էվոլյուցիոն զարգացում չի  
կարող լինել», «Հայաստանում իրա-  
վիճակը միայն դեմոկրատական յե-  
ղափոխութիւնը կարող է փոխել»:  
Հանրահաւաքի իր ելոյթում  
«Հանրապետութիւն» կուսակցու-  
թեան քաղխորհրդի անդամ Գեղամ  
Յարութիւնեանը հայաստանեան քա-  
ղաքական ուժերը բաժանեց երեք  
խմբի՝ իշխանական, իշխանամերձ  
(ներառեալ որոշ «սուտ ընդդիմա-  
դիրները») եւ իրական ընդդիմա-  
դիր: Այս վերջինները «հինգ սո-  
կոս ստանալով երբեք չեն բաւա-  
րարուի», չեն ուզի «իշխանական  
դրախտում մի անկիւն էլ իրենք  
փախցնեն», եւ միայն սրանք կարող  
են փոխել «իրավիճակը երկրում»:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ  
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Քարո-  
զարշաւի մէկ շաբաթուայ ընթաց-  
քում ծաւալուող իրադարձութիւն-  
ներից ակնյայտ է դառնում, որ  
պայքարն ընթանում է ոչ թէ գաղա-  
փարական, այլ շուկայական յարա-  
բերութիւնների սկզբունքներով: Այդ-  
պէս է, օրինակ՝ Ալաւերդիում: Ընտ-  
րութիւններին մասնակցող մի կող-  
մը՝ քաղաքական ուժերը, փորձում  
են ցանկացած գնով աւելցնել իրենց  
ընտրողների թիւը, իսկ միւս կողմը՝  
ընտրողները, փորձում է հնարաւո-  
րինս մեծ օգուտ քաղել նախընտրա-  
կան պայքարից:  
Անցած շաբաթուայ ընթաց-  
քում ալաւերդցիների հիմնական  
խօսակցութեան թեման էր, թէ իւ-  
րաքանչիւրին ինչ կուսակցութիւն-  
ներ են այցելել, ինչեր են խոստացել,  
որ խոստումն է աւելի իրատեսական  
եւ արդեօ՞ք հարեւան գիւղերում  
տրուած խոստումներն աւելի լաւը

չեն: Իւրաքանչիւր ընտրողի ձայնի  
համար Ալաւերդիում չատկայէս  
մեծ պայքար է ծաւալուել ընտրու-  
թիւններին մասնակցող երկու քա-  
ղաքական ուժի միջեւ՝ Հայաստանի  
Հանրապետական կուսակցութեան եւ  
Բարգաւաճ Հայաստանի:  
Վերջինս, օրինակ՝ Ալաւեր-  
դիում անձնագրային տուեալներ է  
հաւաքագրում: Դուներ են թակուծ,  
հարց ու փորձ անում, թէ որ  
կուսակցութեան մասին ինչ կարծիք  
ունեն: Տիկին Օֆելիային ոչ մէկը  
դեռ գումար չի առաջարկել, բայց  
այցելել են տուն, իմացել քաղաքա-  
կան կողմնորոշումը եւ յիշեցրել  
«Բարգաւաճ Հայաստան» կուսակ-  
ցութեան ու դրա ղեկավար բարե-  
րարի մասին. «Երէկ էլ եկան մեր  
դուռը գանգեցին, թէ եկէք ընտրէք:  
Ո՞ւ՞մ թէ Գագիկին: Ես ոչ Գագիկին  
կը ճանաչեմ, ոչ էլ Սիմոնին ու էն  
Ռոբերդ Քոչարեանին»:

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ. «ՄԵՆՔ ԵՐԲԵՔ ԱՅՍՔԱՆ ՄՕՏ  
ՉԵՆՔ ԵՂԵԼ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հայաստանի արտգործնախարար  
Վարդան Օսկանեանը այսօր Վիեն-  
նայում՝ ԵԱՀԿ-ի մշտական խորհր-  
դի նիստում յայտարարել է, որ  
դարաբաղեան հակամարտութեան  
կողմերը երբեք այսքան մօտ չեն  
եղել հարցի լուծմանը:  
«Ես 9 տարի նախարար եմ  
եղել: Դրանից առաջ 5 տարի ես  
Ղարաբաղի հարցով գլխավոր բա-  
նազնացն եմ եղել: Ես տեսել եմ  
միջնորդների բոլոր առաջարկնե-  
րը: Կարող եմ հաւաստիացնել ձեզ,  
որ մենք երբեք այսքան մօտ չենք  
եղել», - ասել է Հայաստանի արտ-  
գործնախարարը:  
Նրա վկայութեամբ՝ ներկա-  
յումս քննարկուող առաջարկը շատ  
հաւասարակուռած է. - «Այն բո-  
լորին ինչ-որ բան է տալիս եւ  
մերժում է կողմերի մաքսիմալիս-  
տական պահանջները: Դա հաւա-

սարակչուռած մօտեցում է, եւ մենք  
յոյս ունենք, որ կը շարունակենք  
առաջընթացի հասնել այս փաս-  
տաթղթի հիման վրայ»:  
Նա տեղեկացրել է, որ Վիեն-  
նայից մեկնելու է Բելգրադ, որտեղ  
հանդիպելու է իր ատրպէյճանցի  
պաշտօնակցին:  
Անդրադառնալով Հայաստա-  
նի խորհրդարանական ընտրու-  
թիւններին՝ արտգործնախարարն  
ասել է. - «Սա լրջագոյն քննու-  
թիւն է Հայաստանի ժողովրդա-  
վարութեան համար, եւ ես խորա-  
պէս համոզուած եմ, որ մենք  
միասին՝ կառավարութիւնը, ընդ-  
դիմութիւնը, հանրութիւնը եւ  
ԵԱՀԿ-ն, իրօք, կարող ենք անց-  
կացնել նորմալ ընտրութիւն, որը  
մեծ ներդրում կը լինի Հայաստա-  
նի հետագայ ժողովրդավարական  
գործընթացն ապահովելու գոր-  
ծում»:

«ՀԱՍՆԵԼՈՒ ԵՆՔ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԴԵՌԱՑՄԱՆԸ»



Ընտրութիւններում մասնակցող «Իմպիչմենտ» դաշինքի հանրահաւաքը  
Ազատութեան Հիպոթեզի վրայ

ԵՐԵՒԱՆ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱ-  
ՄԱՆԱԿ»: Ապրիլ 13-ին Ազատու-  
թեան հրապարակում հրաւիրուած  
հանրահաւաքում «Իմպիչմենտ» դա-  
շինքի ներկայացուցիչ Նիկոլ Փա-  
չինեանն իր ելոյթը սկսեց ընդդի-  
մադիր երկու կուսակցութիւնների  
լիդերներին ողջունելով: «Այսօր  
մեր հանրահաւաքին ներկայ են  
երկու կուսակցութիւնների ղեկա-  
վարներ: Ես ողջունում եմ եւ  
առաջարկում եմ, որ բոլորս միա-  
սին ողջունենք «Հանրապետու-  
թիւն» կուսակցութեան քաղաքա-  
կան խորհրդի նախագահ Արամ  
Զաւէնի Սարգսեանին եւ «Նոր  
ժամանակներ» կուսակցութեան նա-  
խագահ Արամ Կարապետեանին: Ես  
գիտեմ, որ ուրիշ ընդդիմադիր  
կուսակցութիւնների ներկայացու-  
ցիչներ էլ կան այստեղ, եւ ուզում  
եմ մի բան ասել. որեւէ մէկի մտքով  
չանցնի, թէ մենք մրցակից ենք:  
Մենք մրցակից չենք, մենք իրար  
հետ ենք, մենք ընդհանուր պայքար  
ունենք, եւ մենք այդ պայքարը  
իրար հետ տանելու ենք: Մենք  
Շենգակիթում ներկայ էինք «Հան-  
րապետութիւն» կուսակցութեան

հանրահաւաքին, այդ հոյակապ մի-  
ջոցաւումանը: Այսօր իրենք ներկայ  
են այստեղ: Սա նշանակում է, որ  
մենք առանց յայտարարելու միա-  
ցել ենք, մենք իրար հետ ենք, եւ  
մենք անելու ենք այն, ինչ պարտա-  
ւոր ենք անել: Մենք իրար հետ  
չենք մրցակցել ու չենք մրցակցի:  
Մեր մրցակցութիւնը յանուն ազատ  
Հայաստանի է, եւ մենք հասնելու  
ենք Հայաստանի ազատութեանը,  
մենք հասնելու ենք Քոչարեանի  
հեռացմանը», - յայտարարեց Փա-  
չինեանը: Հանրահաւաքին յաջոր-  
դեց երթ դէպի Բաղրամեան պողո-  
տայ՝ հենց այն վայրը, որտեղ 2004  
թուականի Ապրիլի 12-ի՝ լոյս 13-  
ի գիշերը տեղի էին ունեցել յայտնի  
իրադարձութիւնները: Երթի մաս-  
նակիցներն իրենց ձեռքին ունէին  
պլաստիկ դատարկ շշեր, որոնց  
վրայ գրուած էր «Իմպիչմենտ.  
հեռացնէք միասին»: Երթի մաս-  
նակիցները, այդ դատարկ շշերը  
իրար զարկելով, «Իմպիչմենտ» եւ  
«Ազատութիւն» վանկարկելով քայ-  
լեցին մինչեւ ԳԱԱ շէնք, որտեղ  
նոյնպէս տեղի ունեցաւ փոքր հան-  
րահաւաք:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ. «ՊԵՏՔ Է ՄՊԱՍԵԼ ԵՒ  
ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԵԼ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Հայաստանի վարչապետ, Հանրա-  
պետական կուսակցութեան առաջ-  
նորդ Սերժ Սարգսեանը այսօր  
շրջայց է կատարում Արմաւիրի եւ  
Արագածոտնի մարզերում:  
Բոլոր բնակավայրերում տե-  
ղի ունեցող հանդիպումների ժա-  
մանակ վարչապետը շեշտում է, որ  
շրջայցի նպատակը կարող են քա-  
րոզչական համարել, սակայն ինքը  
եկել է բնակիչներին տեսնելու,  
նրանց խնդիրներին ծանօթանա-  
լու, «հաւաստի, իրատեսական խոս-  
տումներ տալու»:  
Վարչապետը արդէն եղել է  
Միասնիկեան, Արտեանի եւ Արագա-  
ծաւան բնակավայրերում: Սերժ  
Սարգսեանին դիմաւորում են աղ  
ու հացով, երաժշտութեամբ: Ամե-

նուր մէկ րոպէ լուռութեամբ յարգ-  
ւում է Անդրանիկ Մարգարեանի  
յիշատակը:  
Իսկ մարդկանց բարձրաձայ-  
նած խնդիրներն ամէն տեղ գրեթէ  
նոյնն են՝ խմելու եւ ոռոգման ջրի  
հետ կապուած, գազաֆիկացման  
խնդիրներ, դպրոցների, հիւանդա-  
նոցների վերանորոգման հարցեր:  
Վարչապետը մարդկանց ասում է,  
որ դրանք լուծելի խնդիրներ են,  
բայց «պէտք է սպասել եւ համատեղ  
աշխատել»:  
«Նրանք, ովքեր սպասում են,  
որ մէկ-երկու տարում բոլոր հար-  
ցերը կը լուծուեն, ապա հաստատ  
իմացէք, որ այդպէս մտածողները  
կը հիասթափուեն», - Արագածոտ-  
նի մարզի բնակավայրերից մէկում  
ասաց Սերժ Սարգսեանը:

ՎԻՐԱՇԱՅԵՐԸ ՊԱՇԱՆՁՈՒՄ ԵՆ ԸԱՅԵՐԵՆԸ ԸՈՉԱԿԵԼ  
ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆ ԼԵՂՈՒ

Վրաստանի «Վիրք» եւ «Ջաւախք» հայկական կազմակերպութիւնները  
պահանջել են հայերէնը հուշակել երկրորդ պետական լեզու: Հայկական  
կազմակերպութիւնները փաստում են, որ օրէնքը, ըստ որի՝ բարձր  
պատիւներ կարող են զբաղեցնել միայն վրացերէն գերագանց իմացողները,  
Ջաւախքում մշտապէս իրատուում է, քանի որ պաշտօնեաների 90 տոկոսը  
վրացերէն չգիտի: Հայկական կազմակերպութիւնների ներկայացուցիչները  
գտնում են, որ ստեղծուած իրադրութիւնից միակ ելքը՝ հայերէնը  
երկրորդ պետական լեզու հռչակելն է:

նուր մէկ րոպէ լուռութեամբ յարգ-  
ւում է Անդրանիկ Մարգարեանի  
յիշատակը:  
Իսկ մարդկանց բարձրաձայ-  
նած խնդիրներն ամէն տեղ գրեթէ  
նոյնն են՝ խմելու եւ ոռոգման ջրի  
հետ կապուած, գազաֆիկացման  
խնդիրներ, դպրոցների, հիւանդա-  
նոցների վերանորոգման հարցեր:  
Վարչապետը մարդկանց ասում է,  
որ դրանք լուծելի խնդիրներ են,  
բայց «պէտք է սպասել եւ համատեղ  
աշխատել»:  
«Նրանք, ովքեր սպասում են,  
որ մէկ-երկու տարում բոլոր հար-  
ցերը կը լուծուեն, ապա հաստատ  
իմացէք, որ այդպէս մտածողները  
կը հիասթափուեն», - Արագածոտ-  
նի մարզի բնակավայրերից մէկում  
ասաց Սերժ Սարգսեանը:

**ԼՈՒՐԵՐ**

**ՔՈՉԱՐԵԱՆԸ ԱՊԱՅՈՒՄԱԳՐԻՈՒՄ Է՝ «ԲԱՐԳԱԿԱՆՆԵՐ» ԶՈՒՄԱՎՈՐԵԼՈՎ**

«Ռոբերտ Բոչարեանը նախագահական լիազորությունների առարկայից չեղում էլ մտադիր է առանցքային դեր խաղալ Հայաստանի իշխանական համակարգում», - կարծիք են յայտնել բրիտանական Economist Intelligence Unit-ի մասնագետները:

Հետազոտական խմբի անդամները՝ «Հայաստանեան պրոտր քաղաքականություններ» վերնագրով յոզուածը հրատարակուել է Economist հանդէսի էջերում:

Խմբի անդամների գնահատմամբ՝ առաջին կայ քուէարկութիւնը մեծ կարեւորութիւն ունի յատկապէս նախագահ Բոչարեանի եւ նորանշանակ վարչապետ Սերժ Սարգսեանի համար. - «Նրանք պատրաստուել են խորհրդարանում զգալի մեծամասնութիւն ստանալ՝ կեղծիքներ, ընտրողների կաշառման ու լրատուամիջոցների նկատմամբ սահմանած հսկողութեան միջոցով: Սա է պատճառը, որ շատերը բաւական թերահաւատօրէն են գնահատուել իշխանաւորների այն պնդումները, թէ այս ընտրութիւններով վերջ կը դրուի հայաստանեան քուէարկութիւնների կեղծման հետխորհրդային պատմութեանը»:

Անդրադառնալով ընտրութիւնների հնարաւոր ելքին՝ խմբի անդամները արձանագրուել են. - «Մի իրավիճակում, երբ հանրային կարծիքի հետազոտութեան հաւաստի արդիւնքներ գործնականում գոյութիւն չունեն, դժուար է գնահատել խորհրդարանի տեղերին յաւակնող թեկնածուների շանսերը: Բայց նոյնիսկ ժողովրդականութիւն վայելելը չաջողութեան երաշխիք է: Եթէ խօսենք առաւելագոյն թուով քուէներ հաւաքելու կարողութեան մասին, ապա միանձնեայ առաջատարն այս առումով, իհարկէ, Հանրապետական կուսակցութիւնն է»:

Քաղաքական այս ուժը բնութագրուած է որպէս «տիպիկ հետխորհրդային իշխանութեան կուսակցութիւն, որին մաս են կազմել բարձրաստիճան պաշտօնեաները, քաղաքացիներն ու իշխանութեան հետ ունեցած կապերից կախման մէջ գտնուող գործարարները»:

Նշելով, որ Անդրանիկ Մարգարեանի մահից յետոյ դառնալով Հանրապետականի միանձնեայ դեկավարն ու փաստացի վերահսկողութիւն սահմանելով հայաստանեան բիզնես էլիտայի հանդէպ, Սերժ Սարգսեանը դարձել է Բոչարեանի իրաւայաջորդ դառնալու ամենատրամաբանական թեկնածուն՝ Economist-ի հետազոտական խումբը հարց է բարձրացնում՝ «Որքանով ուժեղ նախագահ է ուզում տեսնել Բոչարեանն իրենից յետոյ»:

Հետազոտութեան հեղինակները չիշեցնում են, որ գործող նախագահը աւելի վաղ յայտարարել էր, թէ չի պատրաստուել հանրապետութեան ամենաբրիտասարդ թոշակառուն դառնալ: Նրանք ենթադրում են, որ այդպիսով Բոչարեանը ցանկանում է ազդել կառավարութեան վարած քաղաքականութեան վրայ՝ որեւէ պաշտօն

զբաղեցնելով:

«Աւելի յաճախ են խօսում, որ նա կը յաւակնի վարչապետի պաշտօնին», - գրում են Economist-ի հետազոտական խմբի անդամները: - «Իր քաղաքական ապագան Ռոբերտ Բոչարեանը փորձում է ապահովագրել՝ նովանաւորելով «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը: Փորձագէտները առայժմ վիճում են՝ «Բարգաւաճ Հայաստան»-ը ստեղծուել է որպէս հակակշիռ Հանրապետական կուսակցութեանը, թէ՛ արդէն գոյութիւն ունեցող իշխանական ճամբարի յաւելեալ մի հօր հատուածն է»:

Անդրադառնալով հայաստանեան ընդդիմութեանը՝ հետազոտողները արձանագրուել են. - «Երեք հիմնական ընդդիմադիր ուժերը ղեկավարում են Բոչարեանի 2003-ի թուականի հիմնական հակառակորդներ Ստեփան Դեմիրճեանն ու Արտաշէս Գեղամեանը, ինչպէս նաեւ խորհրդարանի նախկին խօսնակ Արթուր Բաղդասարեանը:

Ընդդիմադիրները զգացողութիւն ունեն, թէ «բաւարար ժողովրդականութիւն են վայելում, որպէսզի ընտրութիւններին միայնակ մասնակցեն»: 5 տոկոսի շեմը չաղթահարելու շանսեր, ըստ հրատարակման, ունեն նաեւ Բաժիթի Յովհաննիսեանի «Ժառանգութիւն» ու Արամ Սարգսեանի «Հանրապետութիւն» կուսակցութիւնները:

Իսկ ի՞նչ դիրքորոշում կ'որդեգրի Արեւմուտքը, եթէ ընտրութիւնները Հայաստանում այնուամենայնիւ կեղծուեն, այս կապակցութեամբ Economist-ի հետազոտական խումբը ենթադրում է. - «Պաշտօնական Երեւանին թէ՛ Միացեալ Նահանգները եւ թէ՛ Եւրամիութիւնը զգուշացրել են, որ կեղծիքների դէպքում կարող են բացասական հետեւանքներ լինել: ԱՄՆ-ը, մասնաւորապէս, ընտրութիւնների ընթացքը կապում է «Հազարամեակի մարտահաւէր» ծրագրի շրջանակում 235 միլիոն դոլարի տնտեսական օգնութեան տրամադրման հետ»:

Հրատարակման հեղինակները չիշեցնում են, որ Ղարաբաղեան բանակցութիւններին մասնակցող ամերիկացի եւ միւս երկրների դիւանագէտները նշում են, որ կողմերը կարող են խաղաղ համաձայնագիր մշակել Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններից յետոյ՝ մինչեւ 2008 թուականի հայաստանեան, ապա նաեւ՝ ատրպէյճանական նախագահական ընտրարշաւը. - «Հաշուի առնելով Ղարաբաղում խաղաղութեան հասնելու այս շանսը, վաշինգտոնը կարող է խոչընդոտներ չյարուցել Բոչարեանի վարչակազմի համար»:

«Բայց անգամ «Հազարամեակի մարտահաւէր» ծրագրով յատկացուող շատ անհրաժեշտ գումարներից գրկուելու եւ Եւրամիութեան «Նոր հարեւանութեան» ծրագրից դուրս մնալու հեռանկարը հազիւ թէ ստիպի Հայաստանի իշխանութիւններին ընտրութիւններն անցկացնել արեւմտեան չափանիշներով», - եզրակացնում է Economist-ի հետազոտական խումբը:

**Ս.Դ.Յ.Կ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՊԵՏԻՆ**

Ս.Դ.Յ.Կ. «Սարգիս Տիրումի» Ուսանողական-Երիտասարդական միութիւնը բաց նամակ է յղել Հայաստանի Ազգային Անվտանգութեան ծառայութեան պետ Գորիկ Յակոբեանին, որում ասուում է.

ՀՀ Ազգային Անվտանգութեան ծառայութեան պետ պրն. Գորիկ Յակոբեանին

Ս.Դ.Յ.Կ. «Սարգիս Տիրումի» Ուսանողական-Երիտասարդական Միութիւնը պայքար է սկսել ընդդէմ ՀՀ Հանրային Ծառայութիւնները կարգաւորող մարմնի Մարտի 30-ին ընդունուած 140 որոշման, համաձայն որի 2007 թուականի Յուլիսի 1-ից հանրային շարժական բջջային կապի կանխավճարային հեռախօսաքարտերը յաճախորդներին (բաժանորդներին) պէտք է տրամադրուի գրաւոր պայմանագրի հիման վրայ:

Ուսումնասիրելով նախագիծը՝ մենք գտնում ենք, որ այստեղ որոշակի դրոշմներ հակասում են քաղաքացիների եւ ազգային անվտանգութեանը.

1. Նախեւառաջ, ըստ ՀՀ Հանրային Ծառայութիւնները կարգաւորող մարմնի մասին օրէնքի՝ յանձնաժողովը պէտք է հաւասարակշիռ սպառողների եւ մատակարարողների շահերը: Դա մեզ իրաւունք է տալիս պնդել, որ այստեղ սպառողների կողմից իրենց շահերի մասին հնարաւորութիւն չի տրուել արտայայտուել:

2. Մեր պատկերացմամբ հանրային շահերի մասին իրաւունք ունեն խօսելու Ազգային Անվտանգութեան մասնագէտները: Իսկ ո՞վ է յանձնաժողովի նախագահ Ռ.Նազարեանին իրաւունք տուել արտայայտել հանրային շահերը:

3. Կան նաեւ հարցեր՝ կապուած պայմանագրի հետ, որոնք որոշման մէջ պարզաբանուած չեն. կարող է արդեօք մէկ անձը ձեռք բերել մի քանի կանխավճարային քարտեր, իրաւունք ունի՞ արդեօք անչափահաս երեխան ձեռք բերել քարտ եւ կնքել պայմանագիր, եթէ ոչ՝ իրաւունք ունի նրա ծնողը որոշմամբ նախատեսուած պայմանագիրը կնքել երեխայի անուանից: Ենթադրենք ունի, /ինչի մասին որոշման մէջ խօսք անգամ չկայ/, իսկ եթէ յանկարծ ինդիւրներ առաջանան տուեալ քարտի հետ, ո՞վ է պատասխանատուութիւն կրելու:

4. Արդեօք այս որոշումն ընդունուած չէ նախագահական ընտրութիւններից առաջ տոտալ վե-

րահսկողութիւն սահմանելու եւ օրինական ճանապարհով մարդկանց մէջ վախ ներշնչելու համար: Չէ՞ որ, եթէ մի քանի համարներ մէկ հասցէով են գրանցուած, դա արդէն ինֆորմացիա է կրիմինալների խաւի համար տուեալ անձի ֆինանսական կարգավիճակի մասին, իսկ կրիմինալ խումբն, օգտագործելով բազան անձի դէմ, կարող է հակաօրինական եւ անձին վնասող գործունէութիւն կատարել: Յանձնաժողովը կը կրի՞ արդեօք պատասխանատուութիւն, եթէ սեփական որոշման համաձայն բազաները ծախուեն, ոչ մի գրութիւն կամ վերաբերմունք այս հարցերում չի ներկայացուած անվտանգութեան մասին:

5. Գաղտնիք է, որ Հայաստանի տարածքում թուրքական օպերատորներին տրուած է բաւական լայնածաւալ աշխատանքներ կատարելու հնարաւորութիւն: Լաւ, ենթադրենք սեփական քաղաքացիների հետ որոշման համաձայն պայմանագիր կնքեցին, իսկ ինչպէս են վարուելու դրսից եկած անձանց հետ, ովքեր թուրքական օպերատորների միջոցով ակտիւացնում են իրենց հեռախօսաքարտերն ու օգտուում դրանցից ՀՀ տարածքում: Եթէ Արմենիայի ու Վիւթիանիայի մենաշնորհ, ապա ինչու չեն սահմանափակուել թուրքական օպերատորների աշխատանքները, այստեղից հետեւում է, որ ՀՀ-ում կապի անվտանգութիւնն ապահովուած չէ եւ անգամ ոչ մի կարեւորութիւն չի ներկայացնում:

Եւ վերջապէս, համաձայն էք, որ ով, ով, բայց յանձնաժողովը շատ լաւ պատկերացում ունի այն մասին, որ հեռախօսային ցանցերի հետ պայմանագիրը մինչեւ հիմա չի հաստատուել կարգաւորող մարմնի կողմից. պայմանագիրն Արմենիայի հետ միակողմանի է եւ դրանով իսկ չի համապատասխանում ԵՆ եւ ՄԱԿ-ի որոշումներին: Չմոռանանք նաեւ, թէ ում է պատկանում Արմենիայի:

Հաշուի առնելով վերոնշեալ դրոշմները՝ մենք եկել ենք այն եզրակացութեան, որ այս ամէնը ոչ միայն հակասում է անձի անհատական տուեալների մասին օրէնքին, այլ նաեւ ոչ մի ազգային անվտանգութեան մասին խօսք անգամ գնալ չի կարող:

Ս.Դ.Յ.Կ. «Սարգիս Տիրումի» Ուսանողական-Երիտասարդական Միութիւն

**«ՆԻՒ ԵՈՐՔ ԹԱՅԱՉ»**

Մարտնակուած էջ 1-էն յանցանք»:

Յուցահանդէսի կազմակերպիչը՝ ցեղասպանութեան դէմ պայքարող բրիտանական խումբը, համաձայնած է հանել «Թուրքիոյ մէջ» բառը: Բայց այդ իսկ բաւարար չեղաւ ՄԱԿ-ի նոր, երկշտ ղեկավարութեան համար, եւ ցուցահանդէսի բացումը յետաձգուեցաւ

անորոշ ժամանակով», - ըսուած է օրաթերթի խմբագրականին մէջ:

Վերջաւորութեան «Նիւ Եորք Թայմզ» խմբագրականը կը յայտնէ, որ ՄԱԿ-ի նոր ղեկավարութիւնը եթէ կ'ուզեն պատուով եւ արդիւնաւէտ կերպով ծառայել, ՄԱԿ-ը պէտք է դառնայ միջազգային օրէնքի մարմնաւորում եւ ցեղասպանութեան դէմ հնչեցուող առաջատար ձայն:

**ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻ ԿՈՉԸ**

Մարտնակուած էջ 1-էն Աճէմեան որակեց «ողբալի»:

Այդ գեկոյցներուն մէջ արձանագրուած հակաժողովրդավարական պատկերը չկրկնելու հա-

մար Հնչակեան կուսակցութեան ատենապետը կոչ ըրաւ, ներկայիս ընտրապայքարին մասնակցող ուժերուն պայմանաւորուածութիւն ձեռք բերել «ընտրական գործընթացը չկեղծելու մասին»:

**ՄԱՍԻՍ**  
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԼԻԴԻԱԼԱ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՅԵՏ

- Տիկին Սարգսեան ձեր կուսակցութիւնը երբեւէ միայնակ չի մասնակցել ընտրութիւններին, ինչո՞ւ այս անգամ այդպիսի որոշում կայացրեցիք:

- Մեր կուսակցութիւնը այս անգամ եւս նպատակ ունէր ընտրութիւններին մասնակցել միասնական ընդդիմութեան հետ, եւ մենք ակտիւօրէն մասնակցում էինք այդ քննարկումներին: Բայց քանի որ այդ դաշինքը այդպէս էլ չկայացաւ, մենք որոշում կայացրեցինք միայնակ մասնակցել ընտրութիւններին: Իսկ ինչու չմասնակցենք, ասում են, որ մենք թոյլ ենք: Ես էլ ասում եմ՝ ցոյց տուէք աւելի ուժեղ կուսակցութիւն... ուժեղ են ինչո՞ւ՞ կեղծիքներ անելու, թէ՞ մարդկանց զնելու հնարաւորութեամբ: Իսկ մենք ուժեղ ենք մեր պատմութեամբ, այս տարի կուսակցութիւնը նշում է իր 120-ամեակը, ուժեղ ենք մեր ազգին տուած նուիրեալներով, մեր երիտասարդութեամբ: Ես չեմ կարծում, որ մենք կարող ենք 5 տոկոսը յաղթահարելու խնդիր ունենալ:

- Այսինքն՝ ձեր նպատակը 5 տոկոս ստանալն է:

- Եթէ աւելի շատ ստանանք, աւելի լաւ: Բայց մենք ունենալու ենք եւ հասկանում ենք, որ այսօր այդ խնդիրը լուծելու առաջ են



ՄԴՉԿ-ի Հայաստանի Ատենապետ՝ Լիւդմիլա Սարգսեան

կազմած նոյնիսկ իրենց շատ ուժեղ համարող շատ կուսակցութիւններ:

- Կուսակցութիւններից շատերը արդէն խօսում են, թէ ինչքան ձայն են ակնկալում ստանալ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ: Որքան ձայն ստանալու դէպքում դուք կը համարէք, որ ընտրութիւնները չեն կեղծուել:

- Չէ, մեր ստացածով չէ, որ պէտք է որոշենք ընտրութիւնների արդար կամ ոչ արդար լինելը: Եթէ մենք չստանանք մեր ակնկալած քուէները, դա դեռ չի նշանակի, որ

ընտրութիւնները կեղծուած են: Մենք կը տեսնենք, թէ ինչ մթնոլորտում են անցնում ընտրութիւնները, որ ընդդիմադիր կուսակցութիւնները ինչպիսի արդիւնք ունենցան, ինչպէս են նրանք գնահատում ընտրութեան արդիւնքները:

- Չէ՞ք կարծում, որ ընտրութիւնները վերածուել են ձեւական միջոցառման եւ այլեւս դադարել են իշխանութեան ձեւաւորման միջոց լինելուց... իշխանութիւնը Հայաստանում ձեւաւորում է այլ մեխանիզմներով:

- Այո, վերջին մի քանի ընտրութիւնները իրենց արդիւնքներով ցոյց տուցին, որ իշխանութիւնը դրանց նայում է որպէս ձեւական միջոցառում, քանի որ նրանք, անկախ ընտրողների կամքից, պատրաստ չեն յանձնել իշխանութիւնը: Բայց ես կարծում եմ, որ յուսահատուելն ու մի կողմ քաշուելն էլ ելք չէ, եւ մենք միւս ընդդիմադիր կուսակցութիւնների հետ պատրաստ ենք պայքարել ժողովրդի քուէների համար:

- Ընդդիմադիր մի շարք կուսակցութիւններ համոզուած են, որ ընտրութիւնների արդիւնքները կեղծուելու են, եւ նրանք պատրաստուում են հետընտրական գործընթացներին կոչ անելով, որ ընտրողները Մայիսի 13ին հաւաքուեն հրապարակում: Ինչպիսի՞նք է ձեր դիրքորոշումը:

- Այո, մենք էլ այդ ընդդիմադիր կուսակցութիւնների նման չենք բացառում, որ հնարաւոր է զարգացումները այլ կերպ ընթանան: Բնականաբար ընտրակեղծիքների դէմ ընդդիմութիւնը է ողջ հասարակութիւնը, եւ եթէ հրապարակում կը հաւաքուելի բաւարար թուով վճռական զանգուած, ապա մենք պար-

տաւոր ենք առաջնորդել հասարակութեանը, իսկ եթէ այդ զանգուածը չհաւաքուեց, ապա մենք հերթական անգամ կարճանագրենք, որ այս հասարակութիւնը՝ իր բոլոր անդամներով, ներառեալ ընդդիմութիւնը, արժանի է այդպիսի իշխանութեան:

- Ո՞րն է Հնչակեան Կուսակցութեան ընտրազանգուածը, յանուն ինչի՞ են մարդիկ ձայն տալու հենց ՍԴՀԿ-ին:

- Այսօր իրօք դժուար է խօսել կոնկրետ ընտրազանգուածի մասին, քանի որ իշխանական կուսակցութիւններն իրենց արմինխառատիւ ռեսուրսի, ֆինանսական շահագործման մեխանիզմների գործադրմամբ շատ դէպքերում նաեւ վախի մթնոլորտ ստեղծելով մարդկանց փորձում են հեռու պահել իրենց տեսակէտներից այլ դիրքորոշում ունեցող կուսակցութիւններից: Սակայն բոլորս էլ գիտենք, որ ՄԴՉԿ-ն ոչ միայն հայկական ամենահին կուսակցութիւնն է, այլ ունի յստակ սոցիալիստական ուղղութեամբ: Մենք մեր ստեղծման պահից պայքարել ենք ոչ միայն անկախ Հայաստանի ստեղծման, այլ նաեւ յանուն նրա, որ այդ պետութիւնը ծառայի բոլորին եւ ոչ թէ մի խումբ օլիգարխների: Այսինքն՝ մեր հասարակութեանը հոգեհարազատ սոցիալական արդարութեան, ազատութեան, եղբայրութեան սկզբունքները մեզ համար ոչ թէ սոսկ լոզունգներ են, այլ տարիներով թրծուած համոզմունքներ:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ ԱՒԵՏԻՍ ԲԱԲԱՋԱՆԵԱՆ «ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»

ՔՈՉԱՐԵԱՆԻ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՆԻ ՏԵՂ ԴՆՈՂ ԶԿԱՅ

Շարունակուած էջ 2-էն

րազլուինները դաժան ծեծի ենթարկեցին իրաւապաշտպան Միքայէլ Դանիէլեանին: Ռ. Քոչարեանն էլ ի յանձնարարականներ տուեց իրաւապահներին: Նա ՀՀ գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանին յանձնարարեց «անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկել» իրաւապաշտպանի վրայ յարձակումներին յայտնաբերելու ուղղութեամբ: Իրաւապահներն արդեն երեք տարի այդ յանցագործութեան «բացայայտմամբ» են զբաղուած:

Նոյն թուականի Ապրիլին՝ հայաստանեան ներքաղաքական լարուած զարգացումների օրերին, սպիրազլուինները դաժան ծեծի ենթարկեցին քաղաքական գործիչ Աշոտ Մանուչարեանին: Ռ. Քոչարեանը, ի տարբերութիւն նախորդ դէպքերի, առանց յատուկ դատապարտելու Մանուչարեանի նկատմամբ տեղի ունեցածը, խօսեց որեւէ ուժի դա ձեռն-

տու լինելու-չլինելու մասին եւ անդրադառնալով այն վարկածին, որ Մանուչարեանի ծեծը կազմակերպել են իշխանութիւնները՝ յայտարարեց. «Իշխանութիւններին բնաւ պէտք չէր: Յանձնարարուած է իրաւապահ մարմիններին զբաղուել այս հարցով»:

2006թ. Սեպտեմբերի 6-ին սպանուեց ՀՀ պետական հարկային ծառայութեան օպերատիւ քննչական վարչութեան պետ, գեներալ-մայոր Շահէն Յովսէփեանը: Ռ. Քոչարեանը էլ ի իրաւապահ մարմիններին խիստ յանձնարարականներ տուեց «ձեռնարկել բոլոր միջոցները» սպանութիւնը «հնարաւորին արագ բացայայտելու համար»: Նա նաեւ յայտարարեց, թէ՛ «յանցաւոր գործելատեղը, որն ուղղուած է պետութեան կողմից հարկային վարչարարութեան խտտացման եւ բոլորի համար հաւասար հարկային պայմաններ ստեղծելու գործադրուող ջանքերի դէմ, խտու-

դատապարտելի է եւ ի գորու չէ փոփոխել պետութեան նպատակաւորողութեան քաղաքականութիւնը այդ ոլորտում»:

Սպանութիւնից անցել է 7 ամիս, որի ընթացքում կալանաւորուեցին ու ազատ արձակուեցին Վիրաբեան եղբայրները, յետոյ Հայկ Իսրայէլեանը, որի մասնակցութիւնն այդ սպանութեանը կարող է իշխանական մի քանի պաշտօնեաների համար ճակատագրական լինել: Այսօր այդ յանցագործութեան բացայայտման մասին դեռ խօսք չկայ:

Եւ Ռ. Քոչարեանի՝ ՀՀ իրաւապահ մարմիններին տրուած ամենաթարմ յանձնարարականը վերաբերում է իր «ծնած» «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախընտրական շտաբների պայթիւններին, որոնք Քոչարեանը գնահատել էր իբրեւ «իրավիճակը ապակայունացնելու, խորհրդարանական

ընտրութիւնների նախաշեմին անհանդուրժողականութեան մթնոլորտ ստեղծելու փորձ»:

Թէ՛ արդե՞օք յոյսեր կան, որ այս մի պայթիւնը կը բացայայտուի՞ վերն արդեն նշել ենք եւ արձանագրել: Ըստ ամենայնի՞ ոչ, չի բացայայտուի:

Մի խօսքով, հարկ է արձանագրել, որ Քոչարեանի՝ իրաւապահ մարմիններին տրուող յանձնարարականները, մասնաւորապէս նրանք, որոնք տրուել էին իշխանութեան ընդդիմախօսների դէմ տեղի ունեցած յանցագործութիւնների առնչութեամբ, մնացին չբացայայտուած: Ասել է թէ՛ կա՞մ Քոչարեանի յանձնարարականն իրականում ձեւական բնուէ՞լ է կրել, կամ էլ մեր իրաւապահների համար Քոչարեանի ասածը օրէնք չէ:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ «ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Advertisement for ABA Insurance Services. Includes logo with 'A.B.A. INSURANCE SERVICES', 'Blue Shield of California Authorized Agent', and '30th ANNIVERSARY 1975-2005'. Contact info: E-mail: BMaronian@AOL.com

Advertisement for 'ՄԱՐՈՆԵԱՆ' (Maronian). Text: 'ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՌԱԺԵՇՏ Է', 'ԵՐԲԵՔ ՈՒՇ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ', 'ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՕ ՄԱՐՈՆԵԱՆ', '818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205', 'ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"'



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՐԱՔ՝ 2008 ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԵՏՔ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

Ամերիկայի 2008 թուականի ընտրություններում նախագահական թեկնածուները կը հարցուի:

«Ի՞նչ է ձեր ծրագիրը Իրաքի համար»: Ընդհանուր այս հարցումին տակ Հիլըրի Կլինթոնի, Պարաք Օպամայի մեկ կողմին, իսկ Ռոմնիի կամ Ջիլլիանիյի, կամ Մքքեյնի միևս կողմին, կը տրուին մասնավոր հարցումները -

Ի՞նչ է ձեր կարծիքը Պուշի մագլցումի մասին (surge) 1

Ի՞նչ կը մտածէք ամերիկեան զորքերը տուն վերադարձնելու մասին»:

Ի՞նչ պայմանաժամեր օգտակար կ'ըլլան:

Ի՞նչ դեր վերապահուած է Իրաքի կառավարութեան եւ անոր ենթակալ բանակային կամ ապահովական ուժերուն:

Ասոնց նման հարցումներ կ'ուղղուին հրապարակ իջած տեմոքրատ կամ հանրապետական կուսակցութեան նախագահական թեկնածուներուն:

Անդին կայ Պուշին որդեգրած եւ յամառօրէն հետապնդած «ընթացքը շարունակելու» քաղաքականութիւնը, գիտակցօրէն, եւ կամ ալ անգիտակցօրէն անտեսելով որ իր ցարդ հետեւած ուղին մեծ մասամբ ձախողած է, եւ որեւէ «մագլցում» այսինքն յաւելեալ ուժերու առաքում գործողութեանց դաշտին ներս, դատապարտուած է ձախողութեան: Միևս կողմէ, 2006ի ընտրութեանց Գոնկրէս հասած տեմոքրատները, ցարդ չկրցան յստակ ուղեգիծ մը մշակել, իրաքեան թնճուկէն ձերբազատելու համար: Ոմանք կ'ուզեն զօրքերը անմիջապէս տուն բերել, առիթ տալով որ իրաքցիները իրենք մաքրեն իրենց հաշիւները, որ շատ հաւանաբար կը նշանակէ քաղաքացիական ծանրակշիռ պատերազմ մը, նոյնիսկ իրաքեան սահմաններէն դուրս վտանգին ենթակայ: Ուրիշներ նենսի փոխի նման կը փորձեն տիրակ մը հաստատել, իրանի եւ Սուրիոյ մէջ, փորձ որ խստօրէն քննադատեցաւ Պուշի իշխանութեան կողմէ: Իսկ տակաւին կան որ


պայմանաժամի մասին կը խօսին «ամառուայ վերջը, 2008ի Մարտը» եւայլն, որմէ ետք ամերիկեան զօրքերը տուն կը կանչուին, կան տակաւին ուրիշներ ալ, որոնք կը սպառնան ֆոնտերը դադրեցնել, ֆոնտ առանց որու բանակը անկարող կը դառնայ իր առաքելութիւնը շարունակելու:

Այս եւ նման հարցումներ, տրամադրութիւններ, թելադրութիւններ, այսօր, անտեղի եւ անիմաստ կը թուին: Այլ խօսքով, ներկայի ընթացքը, ինչ-ինչ արդարացումներով սկսուած, եւ տակաւին շարունակուող, ոչ մէկ ազդեցութիւն ունի Իրաքի ճակատագրին վրայ: Յստակ է որ այլեւս Ամերիկեան անկարող է իրաքեան հարցը ինքը լուծելու եւ կամ որեւէ ձեւով «յաղթանակ» ձեռք ձգելու: Ամերիկեան այլեւս պարզապէս «դիտող»ի եւ տուժողի վիճակին դատապարտուած, կրելով նիւթական եւ մարդկային վնասներ, իր սկսած սխալ պատերազմի պատճառաւ:

\*\*\*

Փոքրիկ վերաքաղ մը

2001ի աղէտէն ետք, Պուշի իշխանութիւնը, Իրաքը նկատեց իր սկսած հակահարձակական համաշխարհային պատերազմի, ոչ թէ վերջին, այլ առաջին, սկզբնական օղակը, որ պիտի նոր կարգեր հաստատէր արաբական եւ Միջին արեւելեան շրջանէն ներս: Սատուամ Հիւսէյնի անկումէն ետք, Ամերիկա կը յուսար տեմոքրատիայի յառաջախաղացք մը ընդհանրապէս բռնատիրական կարգերով դեկավարուող այդ շրջանէն ետք: Այս ձեւով, Ամերիկա կը յուսար, իր գինուորական ուժը գործածելով, առաջնային դեր մը որդեգրել մուսուլմանական աշխարհէն ներս եւ յարգանք պարտադրել իրեն հանդէպ: Սակայն, ինչպէս առակը կ'ըսէ. «Տունի հաշիւը շուկային չբռնեց»: Փոխանակ յաղթանակ հանդիսանալու, Իրաքը հանդիսացաւ փորձաքար եւ անյաղթահարելի կուր: Եւ Պուշ ինկաւ ծուղակի մը մէջ, որ այրեց եւ սպառեց իր նախագահութիւնը: Իրաքեան արշաւանքի պատճառաւ, Ամերիկայի



Ճոն Մքքեյն

կուր միջազգային ահաբեկչութեան դէմ, փոխանակ ընդլայնելու, աւելի դարձաւ սահմանափակ, այսինքն Իրաքով պայմանաւորուեցաւ: Աւելին, Ամերիկա փոխանակ իր ազդեցութիւնը տարածելու իսլամական աշխարհէն ներս եւ անկէ ալ անդին, ինքզինք գտաւ մէկուսացած, միայնակ, եւ ինչ որ ողբերգական դարձաւ, անկարող յաղթանակ արձանագրելու Իրաքէն ներս: Նոյնիսկ գաղափարախօսական անմիջուկ արտայայտութիւններ, ինչպիսիք են «ագատութիւնը նախընտրելի է ահաբեկչութեան», կամ «մարդիկ աստուածային իրաւունքներ ունին ազատ պարելու»: Պուշի քարոզչական ելոյթներու ընթացքին արտասանուած, անկարող են ներշնչելու եւ յուսադրելու բեւեռացած մասսաները, մանաւանդ անոնք որոնք ատելութեամբ լեցուած են Ամերիկայի նկատմամբ: Դժբախտաբար, ներկայիս ամերիկեան բանակը առաւելաբար կ'օգտագործէ Պաղտատի թաղամասերու պաշտպանութեան եւ «մագլցումով» յատկանշուած յարաբերական յաջողութիւնները աննշան կը թուին:

Ուրեմն Ի՞նչ

Ամէնուն հայեացքը այժմ պէտք է ուղղուի դէպի յետ-Պուշեան շրջան, այսինքն 2008ի ընտրութիւններէն անդին: Ինչո՞ւ: Քանի որ յստակ է այլեւս որ Ամերիկա ձախողած է Իրաքի մէջ իրողութիւն մը որ Պուշ ինքը անկարող է ընդունելու եւ աւելի անդին երթալու: Պուշ եւ իր իշխանութիւնը մինչեւ իր վիզը խրած է աւագախորտի մը մէջ, եւ նոյնիսկ քաջութիւնը չունի իր պարտութիւնը ընդունելու:

Պուշ տակաւին կ'ակնկալէ



Պարաք Օպամա

հրաշքի համագօր փոփոխութիւն մը եւ սակայն, միևս կողմէ պէտք է գիտնայ որ մանաւանդ քաղաքական կեանքէն ներս հրաշքներ գոյութիւն չունին: Կան դառն իրականութիւններ եւ շօշափելի տուեալներ որոնք առ այժմ երբեք յուսադրիչ չեն: Հիմնականին մէջ, նախագահութեան տենչացող թեկնածուները, փոխանակ ներկայի կացութիւնը վերլուծելու, պարտաւոր են իրենց հայեացքը ուղղելու դէպի ապագան, Իրաքէն անդին, եւ մտածելու թէ Պուշի սկսած հակահարձակական պայքարը ինչպէս պիտի հետապնդեն, իսլամական ծայրայեղական շրջանակներու հետ ինչպէ՞ս պիտի վարուին, այդ պայքարի ծախսերը ինչպէ՞ս պիտի գոյացուին, եւ աւելի կարեւոր, Ամերիկեան ինչպէ՞ս պիտի վերգտնէ համաշխարհային իր հեղինակութիւնը, իրաքեան ձախողութեանէն ետք:

2002-2003 թուականներուն, թերեւս ճիշդ էր հարցնել թէ Ի՞նչ ծրագիր Իրաքի համար: Այսօր 2007ին, Իրաքեան հորիզոնը մթազնած է, անստոյգ եւ յաղթանակի կարելիութիւնները գրեթէ անգոյ: Կը մնայ ուրեմն այն թէ, երբ 2008 թուականին ընտրութիւններէն ետք, Պուշ աւարտէ իր անփառունակ շրջանը, եւ անցնի պատմութեան, Ամերիկան կը շարունակէ մնալ իբրեւ համաշխարհային ներկայութիւն մը, որ կոչուած է նոր, տարբեր քաղաքականութիւն մը մշակելու, եւ իր կորսնցուցած դիրքը վերաշահելու: Հարցումը կը մնայ ո՞վ պիտի ստանձնէ այս նոր պաշտօնը, եւ Ի՞նչ բովանդակութիւն պիտի տայ անոր, յատկապէս օգտուելով իրաքեան արշաւանքի դասերէն:

UNDER THE AUSPICES OF THE ARMENIAN CONSULATE GENERAL
LARK Musical Society presents
A MANSURIAN TRIPTYCH
In Commemoration of the Armenian Genocide of 1915
Concerts at Zipper Hall and Alex Theatre April 20, 23 and 25, 2007 at 8:00 p.m.
For more information call: 818. 500.9997
Concerts funded in part by the Los Angeles County Arts Commission.

# ԱՊՐԻԼԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

Քանի որ գերպետությունները ժամանակին չդատապարտեցին և չպատժեցին Հայերի ցեղասպանությունը իրականացնող Օսմանեան կայսրությունը ու նրա ղեկավարներին, այն շարունակուեց նաև Խորհրդային Միության քայքայման վերջին տարիներին Ատրպեյձանի Սուվկայիթ, Պաքու, Կիրովապատ քաղաքներում և այլ շրջաններում: Բայց այս անգամ, չնայած նահատակության բազմաթիվ հայեր, Ատրպեյձանի «խոփը» դեմ առաւ հայերի անառիկ ժայռին և փշուր-փշուր եղաւ, հայերը մեծ յաղթանակ տարան և ստիպեցին Ատրպեյձանին գէնքերը վար դնել ու խաղաղութեան պայմանագիր կնքել Արցախի և Հայաստանի յաղթանակած պետությունների հետ: Սակայն թուրքերն որքան էլ գոռգոռայ իր քաղաքակրթութեան ժողովուրդին «Թուրքը մնում է թուրք» իր ատրպեյձանցի եղբայրների հետ. փաստը տարիներ շարունակ շարունակուող հայկական յուշարձանների մշակութային ցեղասպանությունն է հայերի նախնադարեան հողերում՝ թուրքիայում և Նախիջևանում, իսկ վերջին տարիներին Նախիջևանի յուշարձանների մասսայական ոչնչացումն է Ատրպեյձանի կողմից: Ստալինը Արցախը և Նախիջևանը ոսկէ սկուտեղի վրայ նուիրեց Ատրպեյձանին և վերջինս Խորհրդային շրջանում հայաթափ եղաւ, նոյն բախտին էր արժանանում նաև Արցախը, իսկ Կրեմլը ոչինչ չձեռնարկեց կանգնեցնելու համար Ատրպեյձանի վայրագությունները Նախիջևանում և Արցախում: Սակայն ի տարբերություն 1915 թ. հայերը ուժ էին ներկայացնում Արցախում և Հայաստանը կանգնեց Արցախի մէջքին: Դժբախտաբար 21-րդ դարի սկզբում դեռ շարունակուեց Հայերի ցեղասպանությունը թուրքիայում յանձինս Հրանդ Տինքերի...:

Հայերի արցախեան յաղթանակները նրանց պոտենցիալի պոսթկոմունիզմ էր, որը կուտակուեց հայ երիտասարդութեան հոգում, շնորհիւ Հայաստանում լոյս տեսած անհամար ազգային գրականութեան՝ մեր պատմութեան քաջարի պատերի, ինչպէս նաև ժամանակակից աննկուն պայքար մղող հայ ֆեդայիների մասին: Այդ գարթօնքն աւելի ամրապնդեց Խորհրդային Հայաստանում Մեծ Եղեռնի 50-ամեակի առթիւ Երեւանում տեղի ունեցած հսկայական ցոյցը, որը

ցնցեց Խորհրդային Միութիւնը և զարմացրեց աշխարհը, որ երկաթէ վարագոյրի ետեւում հզոր ճնշման տակ գոնուող իր աննշան բնակչութեամբ մի փոքրիկ երկիր համարձակուեց էր այդպիսի քայլի դիմել: 1988 թ. հայերի ՄԻԱՄՆԱԿԱՆ պոսթկոմունիզմը առաւել եւս ցնցեց Խորհրդային Միութիւնը, երբ Երեւանում մէկ միլիոն մարդ ցոյցի էր դուրս եկել պահանջելով Կրեմլից իր արդար իրաւունքները...: Հաւատացած ենք, որ այդ իրադարձութիւնները իրական պատկերով մեր պատմութեան կը յանձնուեն որպէս հայ ժողովրդի հերոսական գրուագներից մէկը:

2006 թ. Մայիսին Երեւանում իմ լաւ բարեկամ, Հայաստանի հայրենակցական միութիւնների խորհրդի ատենապետ Ժողէֆ Աւետիսեանը ինձ նուիրեց մի փոքրիկ գրքոյկ՝ «Ես գնացի Կոմիտասի այգի» (1966 թ. Ապրիլ 24)» (ՀՄԽ ՀԿ-ի «Երեւան, Բնօրարնի խմբ., 2005) իր իսկ խմբագրութեամբ: Մի ուրիշ գիրք նուիրեց գրող, հրապարակախօս ու թարգմանիչ Գրիգոր Ջանիկեանը իր հեղինակութեամբ՝ «Ջոկատը, որ կոչուեց էր «Մեծն Մուրադ»» (Դալլ հրատարակչութիւն, Երեւան, 2005), որն այցելել էր ինձ գրքի հերոսներից մէկի՝ Գէորգ Գեղամեանի հետ, իմ հարազատներին՝ եղբօրս կնոջ ու երիտասարդ տղուն կորուստի առթիւ ցաւակցութիւն յայտնելու:

Երկու գրքերն էլ արտայայտում են հայ ժողովրդի կամքի ուժը Հայերի ցեղասպանությունից տանեակ տարիներ անց, որ 1915 թ. Ապրիլի խորհուրդը հայ ժողովրդին թելադրում է արդարութեան համեմուտ համար հիմնականում ապաւինել իր միասնական ուժերի վրայ և պէտք է աշխատել օգտագործել նաև բարոյականութիւնը չճանաչող գերպետությունների և այլ երկրների առաջադէմ անհատների, պաշտօնեաների ու հասարակութեան դիրքորոշումները, նրանց ներքաշելով մեր արդար դատի համար մղուող պայքարի մէջ:

Հայերի ցեղասպանությունից յետոյ թեւաթափ եղած հայ ժողովուրդը զարթօնք ապրեց 1965 թ. Մեծ Եղեռնի 50-ամեակի առթիւ, երբ Խորհրդային Միութեան ամբողջ պատմութեան ընթացքում առաջին անգամ, Հայաստանում նա դուրս եկաւ Երեւանի փողոցները ցոյցի Խորհրդային Միութիւնից պահանջելով, որ նա ընթացք տայ իր արդար պահանջներին՝ զոհուածների և թալանուած ինչքերի

համար հատուցում և թուրքիայի կողմից գաւթուած հողերը վերադարձնել իր տէրերին՝ հայերին: Այդ ցոյցը խաղաղ էլք չունեցաւ եւ ցոյցի բազմաթիւ առաջնորդներին դատապարտեցին աքսորի: Բարեբախտաբար յանձին Հայաստանի կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղար Յակոբ Ջարուբեանի, նրանց պատժամիջոցները աւելի թեթեւ էին, քան դատական օրէնսդրով հասնում էր նրանց:

«Ես գնացի Կոմիտասի Այգի» (1966, Ապրիլ 24)» գրքում տեղ գտած նիւթերը 1965 թ. յաջորդած 1966 թ. Ապրիլ 24-ին Մեծ Եղեռնի զոհերին իրենց յարգանքը մատուցելու համար Երեւանի Կոմիտասի այգու Կոմիտասի պանթէոնը այցելած, տարիներ յետոյ տարբեր ասպարէզներում յաջողութեան հասած, ղեկավար եւ կառավարական պաշտօնների արժանացած մի խումբ ուսանողների 2005 թ. յուշագրութիւններն են 1966 թ. այդ այցի մասին, որոնց այն ժամանակ «մանր խուլիզանութեան» պիտակի տակ կալանաւորել են, գլուխները սափրել եւ 15 օր կալանքի ենթարկել: Ոչ մի խօսք այցի հիմնական նպատակի՝ Հայերի ցեղասպանութեան յիշատակման մասին:

Գրքոյկում մէջբերուած տուեալ խմբից 12 մասնակիցների յուշերը՝ Գեղամ Քիւրումեան (լրագրող-հրապարակախօս), Ռուբէն Սաքապետյան (լեզուաբան, բան. գիտ. դոկտոր), Տիգրան Գամաղեւեան (գրող, հրապարակախօս), Լեւոն Տէր Պետրոսեան (ՀՀ-ի առաջին նախագահ), Լեւոն Անանիկեան (լրագրող-հրապարակախօս), Սամուէլ Մուրադեան (գրականագէտ, բան. գիտ. դոկտոր), Յակոբ Աւետիքեան («Ազգ» օրաթերթի գլխ. խմբագիր), Գէորգ Բարդակչեան (գրականագէտ, դոկտոր, պրոֆէսոր), Էդուարդ Բաղդասարեան (պատմաբան, պատ. գիտ. թեկնածու), Հայկ Խաչատրեան (նկարիչ), Շահէն Յարութիւնեան (լրագրող-հրապարակախօս), Ստեփան Ջատիկեան (գնդակահարուած է 1979 թ. Յունուարի 29-ին Մոսկուայի մետրոյի պայթեցման մեղադրանքով): Յուշերը նրա մասին գրել է խմբագիրը՝ Ժողէֆ Աւետիսեանը, գրքի վերջում մի հատուած վարդգէս Պետրոսեանի «Հայկական էսքրիզներ»-ից՝ բանտարկուածների մասին:

Խորհրդային իշխանութեան տարիներին ազգային խնդիրների վրայ տափու էր դրուած եւ ոչ ոք իրաւունք չունէր արտայայտուելու այդ մասին թոյլատրուած սահմաններից դուրս: Սա նրա քաղաքականութեան մի մասն էր (այլ երկրներում ուրիշ քաղաքականութիւն են վարում էթնիկ ազգերին ազգային գիտակցութիւնից զրկելու համար. վառ օրինակը ԱՄՆ-ն է): Բայց այդ տափուն հայ ժողովրդի համար չէր: Արգելուած հայ գրողների և հայ գրողների ընդհանրապէս արգելուած ազգային գրականութիւնը կարգացում էին գաղտնի, յազուրդ տալով ու լիցքաւորելով երիտասարդութեանը հայրենասիրական ոգով, ինչպէս Բաֆֆու «Կայծերը» և Մեծ Եղեռնին նուիրուած նոր ստեղծագործութիւններ՝ Յովհաննէս Շիրազի «Դանթէական»-ը, որի գարդուղի ճանապարհով Պէյրութում տպագրուած օրինակները ինչ որ ձեւով հասել էին Հայաստան, Պարոյր Սեւակի «Անլուելի Ջանգալատուն»-ը, որոնք չէին տպագրուում Հայաստանում, բայց դրանց օրինակները արդէն տարածուած էին այնտեղ և երիտասարդութիւնը դրանցով յագեցնում էր իր հոգու սովը, միւս կողմից Ուշանում Անդրանիկ զօրավարի յուշարձանի շուրջ բոլոր տեղերից հաւաքուող հայրենասէրների մէջ արթնացող ֆեդայական ոգու կրակը (նշենք, որ նոյն Ուշանում 1989 թ. արդէն կառուցուած էր նաև ֆեդայիներին նուիրուած յուշահամալիր) հսկայական պոտենցիալ կուտակեցին երիտասարդութեան մօտ, որը և պոսթկոմունիզմի 50-ամեակի առթիւ: Ժամանակը եկել էր եւ նա այլեւս չէր կարող լուել: Մեծ Եղեռնի 50-ամեակի իրադարձութիւնը Երեւանում զգաստացրեց ու զարմացրեց աշխարհի գերպետություններին:

Մար.ք էջ 19

## ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ ՓԱՆՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Անգուսպ բողոքով, անհուն մարմնացով Աշխարհն ենք լցրել արդար պահանջով, Այժմ կրկնում ենք, որ պայքարը մղուի Վասն հայ քաջերի թափուած արիւնի...

Դուք անմար լոյսի ջախեր վառեցիք, Լուսածիր ճամբին յար դէպի առաջ... Սիւս հերոսներ ելած անվեհեր Յարգանքով կանգնել ձեր ոգու առաջ...

Ձեր խաղաղ ոգու, սրտի ծալքերում, Թող ծաղկեն հազար երանգ ծաղիկներ, Սրբացած շիրմին ձեր տառապակոծ Թող ծիածանուեն լոյսի կամարներ...

Սիւս եկել ենք, աղօթքի կանգնել, Ընծայ ենք բերել ձեզ վարդ-շուշաններ, Լոյսեր կը վառենք պայքարիդ ճամբին, Կեանքերը կը գոհենք ձեր յուշարձանին...

Նահատակների թափուած արիւնը Դարձաւ սուրբ դրօշ յանուն պայքարի... Մենք պիտի փրկենք ձեր կամքով արի Թշնամու ձեռքից հողը Նայիրի...

Դուք նահատակներ, անմահ ոգիներ, Հանգիստ ննջեցէք աւազուտներում, Մենք պայքարում ենք ոգի ի բոլին, Որ դատաստանի ժամը շուտ հասնի...

CHIROPRACTIC - MASSAGE - WEIGHT LOSS - WELLNESS



**Chiropractic Health Center**

**Eliminate Pain Naturally**  
without drugs. without surgery

<b>Effective Treatment For:</b>	<b>Rehabilitation Services:</b>
<ul style="list-style-type: none"> <li>● Low back pain</li> <li>● Sciatica</li> <li>● Hip and Knee Pain</li> <li>● Headaches</li> <li>● Carpal tunnel</li> <li>● Neck pain</li> <li>● Arthritis</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>● Sports Injuries</li> <li>● Auto accidents</li> <li>● Post surgical rehabilitation</li> </ul>
	<b>Wellness programs:</b>
	<ul style="list-style-type: none"> <li>● Weight Loss</li> <li>● Nutritional counseling</li> <li>● Lifestyle counseling</li> <li>● Stress relief</li> <li>● Stress management</li> </ul>



**Tsolag J. Kazandjian**  
Doctor of Chiropractic

CALL TODAY: 626.821.9544  
Most Insurance plans accepted Same Day Appointments available  
623 West Duarte Road Suite 5, Arcadia, CA 91007

**ԱՊՐԻԼ 24**

**ԵՂԵՈՆ ՅԱՂԹԱԿԱՐԱԾ ԸԵՐՈՍԸ**

**ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔԻ ԸԵՐՈՍ ԸԱՅ ՆՈՐ ԿՈՆԵԱԿԻ ԸԻՄՆԱԴԻՐ ՄԱՐԳԱՐ ՍԵՂՐԱԿԵԱՆԻ (1907-1973) ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ**

**ԴՈՒՏ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ**

Վանի ինքնապաշտպանութեան օրերն էին: Բոլոր վանեցիները գիտուորագրեալ էին: Բացառութիւն չէր կազմում խորակոնիս գիւղի ութամեայ պատանի Մարգարը: Նա կատարում էր տարբեր բնութի առաջադրանքներ: Բայց նա իր հիմնական պարտականութիւնը համարում էր մարտիկներին ջուր, սնունդ եւ փամփուշտ հասցնելը: Մի օր, երբ դադարեցին կրակոցները, նա տուն վերադարձաւ: Ոչ ոք չկար: Հարեւաններն էլ չկային: Սարափեց: Մենակ զգաց: Լաց եղաւ ու գլուխն արած սկսեց քայլել անորոշութեան մէջ: Մի կողակ նկատեց մանչուկին, նստեցրեց իր ձիու վրայ ու բերեց Երեւան: Նա ընկաւ որբանոց: Երբ արձանագրող պաշտօնեան հարցրեց նրա ազգանունը, նա հարցումը չհասկացաւ: Քանի որ անունը Սեղրակ էր, նրան կնքեցին Սեղրակեան: Մարգարը որբացաւ ծնողներից բաց ոչ իր հայրենասիրութիւնից, վանեցիութիւնից, «մեծ մարդ» դառնալու եւ տուն վերադառնալու երազից: Այդ պատճառով էլ նա քաջաբար դիմագրաւեց այդ օրերին հայ որբին բաժին ընկած բոլոր դժուարութիւնները:

Փոքրիկ Մարգարը ապրեց Ռուսական Կայսրութեան փլուզումը, Կովկասեան Մէջի ծաղրանքը, Հայաստանի Հանրապետութեան ասուպային լուսն ու յոյսը, հայ տարածքների որբացումը, Խորհրդային Իշխանութեան հաստատումը: Նա ակադեմիկոս դարձաւ համաճարակի, հարաւոր գաղթականների մահուան, սովի ու տարբեր կողմերից ներմուծուած բռնութիւնների: Բայց նա չյուսահատուեց, չվհատուեց: Չկորցրեց իր ինքնավստահութիւնն ու երազը: Մերժեց Հայաստանից դուրս գալու բոլոր հրաւերները: Կատարեց տարբեր բնութի աշխատանքներ ու շարունակեց սովորել: Նա լայնօրէն օգտուեց ուսման ասպարէզում Խորհրդային Հայաստանի ընձեռնած հարաւորութիւնից:

Այդ օրերին արդիական էին հնչում Մ. Նալբանդեանի «Երկրագործութիւնը Որպէս Ուղղիչ ձանապարհ» աշխատութեան մէջ արտայայտուած գաղափարները: Մեծանուն գրող Լեոն Սիւրմէյեանի իր «Ձեզ եմ Դիմում Տիկնայք ու Պարոնայք» ինքնակենսագրական վէպում գրում է, որ ինքը որպէս Հայաստանում գիւղատնտեսութեան նուիրուելու պատրաստ երիտասարդների խմբի անդամ գտնուել է հայրենիքում: Մարգարը ընդունւում է Երեւանի Համալսարանի գիւղատնտեսական ֆակուլտետը եւ այն աւարտում 1930-ին, այն տարին երբ այդ ֆակուլտետը դառնում է ինքնուրոյն ինստիտուտ: Իր ուսումնառութեան ողջ ընթացքում նա աշխատեց Երեւանի գիտնագործութեան գործարանում սեւագործ բանուորից աստիճանաբար բարձրանալով մինչեւ գլխավոր մասնագէտի ու գլխավոր համեսի աստիճանին: Շուրջ կէս դար նա նուիրուել է Երեւանի Կոնեակի յաղթարշաւին՝ հայ կոնեակը հասցնելով համաշխարհային համբաւի ու այն դարձնելով ազգային արժէք:

Մի օր ես նրան հարցրի. «Հայրիկ, ինչու դու նախընտրեցիր գիտնագործութեան ասպարէզը մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ Հայաստանում կիսատով էր ու երկիրը

նախ եւ առաջ կարիք ունէր այլ բնութի մասնագէտներին»: Նա իրեն բնորոշ ժպիտով ասաց. «Մենք մտածում էինք ոչ թէ օրուայ, այլ ապագայի, հարստութեան, յաւիտենականութեան չափանիշներով: Երկրորդ. Աստուածաշունչը հաստատում է, որ նոր քաղաքակրթութեան կերտման հենց սկզբում, երբ Նոյ Նահապետը Արարատ լեռից իջաւ նախ փառք տուաւ Աստծուն եւ ապա սկսեց զբաղուել խաղողագործութեամբ ու գինի պատրաստեց: Գիտնագործութեան օրրանը Հայաստան աշխարհն է ըստ Սուրբ գրքի: Ես այստեղ տեսնում եմ հայերին ուղղուած որոշակի նախախնամական կոչ: Ես դրական եմ արձագանգում տէրունական այդ կոչին»: Ես առարկելով նրան ասացի, որ գինին մեղքի աղբիւր է: Նա հակադրուելով ինձ ասաց, որ առանց ջրի կեանք չկայ, բայց մարդիկ խեղդում են ջրի մէջ: Պէտք է միանալ, թէ մեզ վստահուած իրը ինչպէս, ինչու եւ ինչ համաչափութեամբ են օգտագործում: Աշխարհը Աստուած մեզ տուեց այն ձիւղ եւ բարիքի համար օգտագործելու: Նա մինչեւ իր կեանքի վերջը հաւատարիմ մնաց այդ կոչին: Պատահական չէր, որ Հայաստանի անվտանգութեան մարմինները նրա բնակարանը խուզարկելիս գայլոյթով արձանագրեցին այն փաստը, որ իր գրադարանում պահուած էր Աստուածաշունչ մի մատեան, Բաֆֆիի ու Չարենցի հատորների կողքին:

Աւանդութեան համաձայն Ֆրանսացիները պատահմամբ են կատարել կոնեակի գիւտը: Հարիւրամեայ Պատերազմի (1337-1453) օրերին Ֆրանսացիները չկարողանալով շուկայում վաճառել իրենց գինին այն վերածում են սպիրտի ու պահում կաղնուց պատրաստուած տակառներում: Տարիներ անց, երբ բացում են տակառները, այնտեղ գտնում են իրենց համար անծանօթ, բայց համեղ մի խմիչք: Այդ դէպքը հիմնականում տեղի է ունենում Ֆրանսայի արեւմուտքում գտնուող Շարանդա դեպարտմենտի Շարանդա գետահովտի խաղողի այգիներում հարուստ շրջանում: Այդ շրջանի բերքը մշակուած էր Կոնեակ փոքր բնակավայրում: Այս հիման վրայ տուեալ խմիչքը կոչուած է Կոնեակ: Ֆրանսացիները պնդում են, որ միայն այդ շրջանում եւ այդ շրջանի խաղողից պատրաստուած խմիչքը կարելի է անուանել Կոնեակ:

Հայաստանում Կոնեակի արտադրութիւնը սկսում է 1880-ական թուականների սկիզբներից: Երեւանի Կոնեակի Գործարանի կոնեակադարանում պահուած է Հայաստանում արտադրուած հնագոյն Կոնեակի մի շիշ որի վրայ որպէս արտադրութեան թուական նշուած է 1887: Որոշ հեղինակներ այդ համարում են հայաստանեան կոնեակի արտադրութեան սկիզբը: Ուրիշներ գտնում են, որ քանի կոնեակի հնագոյն համար նուագագոյնը անհրաժեշտ է երեք տարի իսկ արտադրութեան կազմակերպման համար նուագագոյնը նոյնքան տարիներ, ապա Հայկական կոնեակի արտադրութեան թուականը պէտք է սկսել նուագագոյնը 1881-ից: Գործարանի նկուղային յարկում պահուած են 1892-ից յետոյ պատրաստուած պատրաստուած կոնեակներով լեցուած տակառներ: Այդ հարստութիւնը փրկուեց հեռատես ու հայրե-

նասէր մի բանուորի հնարամտութեամբ: Քաղաքացիական պատերազմի տարիներին, երբ երկրում ամէն ինչ ենթակայ էր կողոպուտի, նա այդ տակառները հաւաքեց մի սենեակում ու դրա դուռն ու պատահանները ծեփելով դրանք թաքցրեց: Երբ խաղաղութիւն հաստատուեց դրանք դուրս բերուեցին: Դրանք դարձան այն հարուստ ժառանգութիւնը, որի վրայ բարձրացաւ կոնեակի նոր դպրոցը: Առանց դրանց շատ դժուար պիտի լինէր այդպիսի արագութեամբ ու որակով հաստատել հայ կոնեակի պատմութեան նոր փուլը: Մեր օրերում հայ կոնեակի հարստութիւնը փրկող այդպիսի մի ձեռք չգտնուեց: Կովկասեան հայ քարիւղի հորերի նման օտարացաւ նաեւ կոնեակի հայ ժառանգութիւնը:

Մինչեւ Խորհրդային Ֆեդերատիւ խութեան 20-րդ ամեակը, մինչեւ 1937 թուականը, Խորհրդային Միութիւնը տեսակաւոր (անուանակիր) կոնեակ չէր արտադրում: Այն սահմանափակում էր լոկ 2, 3, 4 աստղանի (տարի հնութիւն ունեցող) սովորական Ֆին-շամպայն, Ֆին-խամպայն ընտիր եւ Ֆին-շամպայն հին տեսականի արտադրութեամբ: Երկարամեայ ուսումնասիրութիւնից եւ փորձերից յետոյ, 30-ամեայ Մարգար Սեղրակեանն էր, որ առաջինը ԽՍՀՄ-ում պատրաստեց տեսակաւոր (անուանակիր, մարըչնի) կոնեակը որն ունէր 10 տարեկան հնացում եւ 43% ալիքոտայնութիւն: Դրան բնորոշ է համարուած մուգ կարմրակաղնու գոյնը, սիգարի տուփի հոտը, մեղմութիւնը եւ յազեցուածութիւնը: Այս նշանակում է, որ Սեղրակեանն էր սպիրտի հնացման գաղափարների եւ նոր տեխնոլոգիայի հիմքերն ու կանխորոշել էր հայկական կոնեակի նոր դպրոցի առանձնապատկութիւնները: Պատահական չէ, որ դրանով հեղինակը

հիմքը դրեց ապագայ հայկական կոնեակների ստեղծման: Ստալինեան բռնութիւնների այդ տարիներին դժուար էր անուանակոչել որեւէ նոր ստեղծուած բան: Առաջարկուած էր նրան տալ խորհրդային իրականութիւնից բխող որեւէ մի անուանում: Սեղրակեանը գաղտնի դիմում է Մեծ Վարպետին՝ Աւետիք Խահակեանին: Նա առաջարկում է նոր կոնեակը անուանել «Յոբելեանական», քանի որ 1937 թուականը ԽՍՀՄ-ի համար յոբելեանական է եւ, որ բոլոր ժամանակներում լինելու են յոբելեաններ: Դա նաեւ իր 30-ամեայ յոբելեանն էր: Այսպիսով, անդրանիկ անուանակիր հայկական կոնեակի քաւորը դառնում է հայ գրականութեան մեծ դասականը: Այդ օրուանից սերտանում է երկու մեծ վարպետների՝ գրականութեան ու կոնեակի վարպետների բարեկամութիւնը:

Վարպետ Մարգարը եկաւ այն եզրակացութեան, որ հայկական կոնեակը իր մէջ պէտք է խտացնի հայ մարդու ստեղծագործական խորքը, նրա ճաշակի երանգաւորումները, նրբագոյն զգացումները, կեանքի հաճոյքի ըմբռնումները, Հայաստանի օդի, հողի, արեւի, ջրի, խաղողի առանձնապատկութիւնները: Այս իմաստով այն անհատականացուած ու ազգայնականացուած է: Այն ինքնատիպ քնարերգութիւն է: Տուեալ իրողութեան մէջ են պահուած հայ կոնեակի գաղտնիքները: Այս ոգով էլ նա արարեց հայկական երեք (սովորական շարքային) եւ տասը տեսակաւոր (անուանակիր) կոնեակները, որոնք 1955-ից մինչեւ 1973 թուականը միջազգային ցուցահանդէսներում նուաճեցին 39 ոսկի եւ 15 արծաթ մեդալներ: Դրանք այդպէս արժէքաւորուեցին մասնագէտների միջազգային ընտանիքի կողմից:

Շաբ.ք էջ 17

**ԱՊՐԻԼԻ ԶԵՏՔԵՐՈՎ**  
**ԽՕՍՔ ՆԵՐՄԱՆ ՈՒ ԿԱՐՕՏԻ...**  
**ՆԵՐՄԵՍ Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ**

Ներեցէք ինձ իմ լաւ պապեր,  
 Ներիր Վանի Գոմս գիւղի մեծ՝  
 Ռէս Յովհաննէս,  
 Եւ այդ գիւղի  
 Խաչուած երեց՝  
 Տէր Մեսրոպ պապ:  
 Ներեցէք ինձ  
 Զօրս անբախտ կորած քոյեր՝  
 Վարդանման իմ Վարդուհի,  
 Ու ոսկեծամ  
 Սիրուն Եաղուք,  
 Իմ մօրաքոյր անբախտ Մարօ,  
 Որ գերուեցիք  
 Ու մաշեցիք  
 Չեր սեւ կեանքի օրերը սեւ,  
 Կեանքը տխուր ու անարեւ...  
 Բայց ես գիտեմ, (հաստատ  
 գիտեմ),  
 Զիմա չկաք, չէք ապրում դուք  
 Այս աշխարհում,  
 Բայց ապրում եմ ձեզմիջ ծնունած  
 Ձաւակները կապուտաչեայ,  
 Ոնց բեկորներ ցաք ու ցրիւ,  
 Վանո՞ւմ,  
 Սուշո՞ւմ,  
 Բիթլի՞ս, Պոլի՞ս...  
 Բայց թէ գիտե՞մ,  
 Գիտե՞մ արդեօք,  
 Իրանում էլ  
 Իրեցք տոհմից  
 Կան բեկորներ,

Ու կամ եւ ես,  
 Որ կարօտով, սիրով տոչոր,  
 Երագում եմ մի հրաշքով  
 Գտնել մի օր  
 Կորածներս հոգեհատոր...  
 Ա՛խ, թէ լինէր,  
 Լինէր մի օր,  
 Զասնէի Վան,  
 Թափառէի փողոցներում,  
 Թափէի ես դռներն բոլոր,  
 Ու փնտռէի կորածներիս  
 Կորած հասցէն,  
 Տներն անյայտ,  
 Որոնք թերեւս չունեն ոչինչ  
 հայուրիւնից,  
 Զայուրիւնից ոչ մի Աշոյլ,  
 Անծանօթ եմ հայ անուրիւն,  
 Ու չգիտեմ ոչինչ, ոչինչ,  
 Իրեցք ծագումն,  
 Իրեցք ցեղի  
 Եւ իմ մափն  
 Որ ապրում եմ  
 Նրանց մի օր հանդիպելու  
 Անմեռ յոյսով  
 Ու մանկական երազանքով...  
 Տարուած ահա այս խոհերով  
 Մեղաւոր եմ ես զգում ինձ  
 Որ չեմ գտել կորածներիս  
 Ու մեր տոհմի հետքերն իսկ...  
 Ներեցէք ինձ իմ լաւ, իմ լաւ,  
 Խաչուած պապեր...

# Massis Weekly

Volume 27, No. 13

Saturday, APRIL 21, 2007

## New York Times Editorial

### Turkey And The U.N.'s Cover-Up

More than 90 years ago, when Turkey was still part of the Ottoman Empire, Turkish nationalists launched an extermination campaign there that killed 1.5 million Armenians. It was the 20th century's first genocide. The world noticed, but did nothing, setting an example that surely emboldened such later practitioners as Hitler, the Hutu leaders of Rwanda in 1994 and today's Sudanese president, Omar Hassan al-Bashir.

Turkey has long tried to deny the Armenian genocide. Even in the modern-day Turkish republic, which was not a party to the killings, using the word genocide in reference to these events is prosecuted as a serious crime. Which makes it all the more disgraceful that United Nations officials are bowing to Turkey's demands and blocking this week's scheduled opening of an exhibit at U.N. headquarters commemorating the 13th anniversary of the Rwandan genocide because it mentions the mass murder of the Armenians.

Ankara was offended by a sentence that explained how genocide came to be recognized as a crime under international law: "Following World War I, during which one million Armenians were murdered in Turkey, Polish lawyer Raphael Lemkin urged the League of Nations to recognize crimes of barbarity as international crimes." The exhibit's organizer, a British-based antigencide group, was willing to omit the words "in Turkey." But that was not enough for the U.N.'s craven new leadership, and the exhibit has been indefinitely postponed.

It's odd that Turkey's leaders have not figured out by now that every time they try to censor discussion of the Armenian genocide, they only bring wider attention to the subject and link today's democratic Turkey with the now distant crime. As for Secretary General Ban Ki-moon and his inexperienced new leadership team, they have once again shown how much they have to learn if they are to honorably and effectively serve the United Nations, which is supposed to be the embodiment of international law and a leading voice against genocide.

## Armenian Caucus Co-Chairs Urge President Bush To Reaffirm The Armenian Genocide

WASHINGTON, DC -- The Co-Chairs of the Congressional Caucus on Armenian Issues Reps. Frank Pallone, Jr. (D-NJ) and Joseph Knollenberg (R-MI), have sent a letter, urging President George W. Bush to reaffirm the United States' record on the Armenian Genocide in his upcoming April 24th commemorative statement.

Last year in his annual commemorative speech, the President noted that it was a "tragedy for all humanity and

one that we and the world must never forget," but he has repeatedly failed to use the word genocide when referencing the tragic killings of 1.5 million Armenians from 1915-1923 by the Ottoman Turks.

In their letter, the Co-Chairs encouraged the President to recognize the atrocities committed against the Armenian people as genocide stating in

Continued on page 2

## SDHP Chairman Calls On Armenian Authorities To Conduct A Free And Fair Election

Chairman of Central Board of Social Democrat Hunchakian Party Setrak Ajemian, held a press conference on April 17 in Yerevan, detailing the SDHP's position about issues it sees vital for the Armenian nation. Touching upon the subject of parliamentary elections, Ajemian stated that it has been the historical desire of Social Democrat Hunchakian Party that a free and independent Armenia hold free and democratic elections. The SDHP, Diaspora Armenian, as well as Armenian citizens have to date always expressed discontent with imperfection of previous elections.

According to Ajemian's observation, in order to not repeat the anti-democratic sentiment of the past, political forces taking part in the electoral struggle should ensure democratic elections, and not face the "sad phenomenon" of having international organizations scrutinize Arme-

nia as undemocratic.

On the subject of dual citizenship, Ajemian stated the concept "is acceptable for the all Armenian people," but the adoption of the bill on dual citizenship being in circulation at present may generate serious problems. The SDHP in the past had offered the late Prime Minister Andranik Margarian to utilize the professional expertise of SDHP members to "crystallize" a bill that would be acceptable to Daisporans and yet not cause serious repercussions for Armenia. Setrak Ajemian stated that the offer remains valid today.

The SDHP Chairman also stated that although the Social Democrat Hunchak party is within the ranks of the constructive opposition, the SDHP and its membership are always willing to take part and facilitate any

Continued on page 2

## At The Request Of Archbishop Khajak Barsamian Texas University Withdraws Its Sponsorship Of Pro-Turkish International Conference

At the request of the Archbishop Khajak Barsamian, Primate of the Eastern Diocese of the Armenian Church of America, SMU University in Texas pulled its sponsorship from the Turkish-favoring "International Conference on Turkish-Armenian Dialogue."

Last Saturday the Turkish Students Association held the event in the Umphrey Lee Ballroom despite academic disapproval of the event's scope and organization.

Archbishop Barsamian and other scholars viewed the event as a sounding board for Turkish scholars and religious leaders to deny the Armenian genocide. Archbishop Barsamian called it a "historically unjustified and morally objectionable effort to call into

question the alleged Armenian Genocide and derail efforts by the U.S. government to recognize this crime against humanity."

Many scholars believe that Turkish organizations organized the dialogue in response to the Dallas community's recognition of the "Armenian Genocide." In 2005, Dallas Mayor Laura Miller made a proclamation recognizing the 90th anniversary of the genocide.

According to Archbishop Barsamian, "I have been repeatedly reminded of how the timing of the event, and the rush to have it held so quickly with it being finalized only a

Continued on page 2

## President Bush Calls For Free Elections In Armenia

U.S. President George W. Bush has congratulated Serzh Sarkisian on his appointment as Armenia's new prime minister and urged him to help ensure the proper conduct of the upcoming parliamentary elections.

"We look forward to the parliamentary elections on May 12 and hope that you will help ensure that these elections are free and fair, meet international standards, and bolster the relations between our two countries," Bush said in a congratulatory message made public by Sarkisian's office on Tuesday.

The Bush administration strongly criticized Yerevan for serious fraud

reported by international observers during the last Armenian parliamentary and presidential elections. Sarkisian, who was the country's defense minister before replacing the deceased Prime Minister Andranik Markarian on April 4, played a key role in the conduct of those polls.

U.S. officials have said that the upcoming vote is a good opportunity for the Armenian authorities to redeem themselves. They have warned that a repeat of serious fraud would jeopardize the release of \$235 million in additional U.S. economic assistance to

Continued on page 2

## Ara Najarian Appointed Glendale Mayor

GLENDALE--Glendale City Council Member Ara Najarian was appointed the City's Mayor. Najarian, 46, takes over the ceremonial position from outgoing Mayor Dave Weaver. This is Najarian's first time serving in the position of Mayor. The position of Glendale Mayor is rotated on an annual basis.

Najarian was first elected to office in April 2005. During the past year he was Vice-Chair of the Glendale Redevelopment Agency. He has previously served as Chair of the Glendale Housing Authority.

In addition to serving on the City Council, Najarian is currently a member of the Metropolitan Transit Authority Board of Directors and a member of the Southern California Regional Rail Authority Board of Directors. He is also a member of the Glendale Bar Association and the Board of Regents of Holy Family High School. Najarian previously served as a member of the Glendale Community College Board of Trustees from 2003-2005.

Also at Tuesday's meeting, incumbent Council Member Dave Weaver and small business owner John Drayman were sworn in to serve four-



Glendale Mayor Ara Najarian

year terms. This is Weaver's fourth term in office while Drayman was the top voter getter in the April 3 election.

Two term City Council member Rafi Manoukian and three other Armenian-American candidates (Greg Krikorian, Chahe Keuroghlian and Vrej Agajanian) failed to win enough votes to secure a seat on the council. Manoukian's loss reflects on his failure to work with all segments of the community and alienation of a large segment of the Armenian-American voters.

## Poll Shows Armenians Oppose U.S. Foreign Policy

Most Armenians share a worldwide disapproval of the interventionist foreign policy pursued by the United States, according to a multinational opinion poll reported on Wednesday.

The poll was conducted from June 2006 to March 2006 in Armenia and 17 other countries — including the U.S., China, and Russia — that represent roughly 56 percent of the world's population. Its findings were released by the Chicago Council on Global Affairs, a U.S. think-tank that helped organize the study aimed at gauging global public opinion on the issue.

Respondents in those countries were asked how much they trust the U.S. "to act responsibly in the world." Fifty-eight percent of those polled in Armenia answered "not at all" or "not very much." The same answers were given by a majority of respondents in China, Russia, France and six other nations covered by the survey.

Pollsters also found that nearly two-thirds of Armenians believe the U.S. is more aggressive in acting as a global

policeman than it should be. Large majorities elsewhere, including America itself, share this view, they said.

Christopher Whitney, executive director for studies at the Chicago Council on Global Affairs, was quoted by the AFP news agency as saying that the survey's results testify to broad international frustration with U.S. foreign policy and the war in Iraq in particular. But he said people around the world realize at the same time that the U.S. has a key role to play in promoting and enforcing international security.

Armenians, for one thing, do not appear to be unhappy with their government's growing defense and security ties with Washington. Sixty percent of them described U.S.-Armenian relations as "good" in a U.S.-funded opinion poll conducted last November.

However, only 17 percent listed the U.S. among Armenia's most important partners, with almost twice as many respondents mentioning neighboring Iran, America's regional arch-foe. The list was topped by Russia and France.

## Texas University Withdraws Its Sponsorship

Continued from page 1

week before it was held."

"This coincides significantly with the United States Congress' step towards considering a new, non-binding resolution concerning the Armenian Genocide and other resolutions condemning the assassination of Hrant Dink and Turkey's oppression of journalist freedom."

Archbishop Barsamian argued that Article 301 of Turkish law hampered the Patriarch, who resides in the capital of Turkey, from expressing his true thoughts and concerns. Article 301 of Turkish law makes it a crime to "denigrate Turkishness." Violators have often faced heavy fines, imprisonment and assassination attempts by

Turkish nationalists.

The International Association of Genocide Scholars, the leading academic association of professionals in the field of genocide studies, has repeatedly affirmed the historical truth of the Armenian Genocide and noted that such acknowledgement by governments and institutions is essential to confront the ongoing cycles of genocide today.

Archbishop Barsamian said he remains ready to engage in authentic dialogue.

"I look forward to working with SMU, its student groups and others of good will to organize a truly balanced panel capable of discussing the Armenian Genocide and the future of the Armenian-Turkish relations," he said.

## President Bush Calls For Free Elections In Armenia

Continued from page 1

Armenia. Still, the U.S. administration is unlikely to ostracize Yerevan in the event of another deeply flawed ballot now that it is hoping to broker a resolution of the Nagorno-Karabakh conflict before the end of this year.

U.S. Assistant Secretary of State Daniel Fried implied last week that Washington does not expect the Armenian elections to be fully democratic. "We don't expect perfection,"

he told journalists. "We don't expect to go from deeply flawed to perfect, but we do expect to see substantial forward progress."

Fried noted at the same time that Armenia should have been "way ahead of Georgia" in terms of democratic reforms given the strength of its worldwide Diaspora and its links with Europe and the United States. "Armenia should be doing better," he said. "It should be a leader. It should be a prospering country. It has all the ingredients."

## SDHP Chairman Calls For Free And Fair Election

Continued from page 1

discussions and actions taken by Armenia's Government in resolving issues of great importance to the Armenian nation. These issues include the affirmation of the Armenian Genocide, and subsequent reparations towards the Armenian state, and nation. Also included within these issues is the establishment and maintenance of Armenian education within the Diaspora and Armenia, to protect the Armenian language and culture. Major exodus of Armenian youth from Armenia must

also be addressed and rectified. It is the desire of the SDHP that Armenia not only curtail the mass exodus of young Armenians, but to establish a track record of accepting immigrants Armenians from all over the world. In order to do so we must have a fair and just economic policy that not only caters to oligarchs but also to the average citizen of Armenia. Lastly Setrak Ajemian conveyed the SDHP's and its memberships worldwide desire to establish a party headquarters in an independent democratic Armenia, and that this desire is close to fruition.

## Armenian Community Meets With Nevada Senatorial Delegation

LAS VEGAS, NV -- The Armenian American Community of Nevada held a meeting with the offices of Senate Majority Leader Harry Reid (D-NV) and Senator John Ensign (R-NV) in Las Vegas, Nevada to discuss issues critical to the Armenian-American community.

# ՔԱՆԱՄԵԿԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՍԱՐԴԱՍՊԱՆՆԵՐ՝ ԱՄՕԹ ՁԵՋ

ԱՐԱՍԱՐԳՍԵԱՆ  
ՊԱՐՍԿԵՐԻՆԻՅ ԹԱՐԳՄԱՆԵՑ՝  
ՆՈՒԱՐԴ ԶԱՐԳԱՐԵԱՆ

Յոժուուար 19: Բաց ու խօսի գրքերի մէջ մենակ նստած մտածում եմ ահա Ապրիլ ամիսը ճամբին է: Մէկ ու կէս միլիոն ցեղասպանութեան ու ազգային սպանդի ինստուն երկրորդ տարելիցը առջեւում: Անմահ գոհերի պատկերը աչքիս առաջ է, տեանում եմ ինչպիսի անգթօրէն եւ անասնական վայրագութեամբ են յօշոտում ու ոչնչացնում եւ նրանց այրում եւ յօշոտած մարմինների վրայ դիւային պար են բռնում:

Այո ինստուններու տարի առաջ, որոշեցի գրիչս շարժեմ եւ քանի կամ ու կ'ապրեմ 92րդ մեխին էլ գամեմ մարդասպանների եւ նրանց վատահամբաւ հովանաւորների ճակատին ու դագաղին: Ո՞վ գիտի գուցէ վաղը չլինեն: Այո մտածում եմ ամէն հայ անհատի պէս՝ միտքս դեռեւս անմահ գոհերի հետ է:

Աչքիս առջեւից անցնում են հայ արժանաւորներ, արհեստաւորներ, ստեղծագործ արուեստագէտներ, հայ արարող ուսուցիչներ, գիւղացիներ եւ յետոյ տեանում եմ մի երկար շարան վզներին պարան, ձեռները կապած, ոտքերը շղթայուած կին ու տղամարդ, մեծ ու փոքր, ծեր երիտասարդ արեւակեց անապատներում, (Տէր Զօրի բնական քուրաներում) դէպի մահ եւ ոչնչացում են քշում, ես էլ նրանց մէջ եմ: Զարդուող ոսկորների, քրքրուող ու յօշոտուող մարմինների, ճիչ ու հառաչանքի ձայն եմ լսում եւ զարմացած Արարչի անտարբերութեան, ի՞նչու որեւէ հրաշք չի կատարում: Մի թե՛ ըստ կրօնական աւանդութեան լուծ գերօտաւանին իրենց չար ու վատ արարքների համար քար չդարձրեց իսկ ինչու այս մարդասպաններին չի պատժում: Ինչո՞ւ ոչ մի պատասխան, միայն իմ ձայնս եմ լսում:

Ինքս ինձ մտորում եմ ինչո՞ւ 21րդ դարում այս քաղաքակիրթ ու առաջադէմ երկիրները, այս մեծ պետութիւնները մի ամբողջ ժողովրդի դէմ կատարուած յանցագործութիւնը չեն հաստատում: Հրեաների հրկիզման մարդասպան հրամանատար՝ համաշխարհային պատերազմի խելագար Հիթլերը անամօթաբար յայտարարեց «երկու տասնեակ տարի առաջ հայերի ցեղասպանութեան համար աշխարհը լռեց»: Ինչո՞ւ հրեաների հրկիզման համար, այսքան բողոք, իսկ հայերի համար ոչ: Արդեօ՞ք Տէր Զօրի անապատների կիզիչ արեւն ու քաղցն ու ծարաւը բաց երկնքի տակ, նոյնչափ անողորմ ու տանջալի չէր: Արդեօ՞ք դրանց արեան գոյնը նոյն կարմիր չի: Հրեայ ժողովրդի սպանդից մազապուրծ եղածների ժառանգներից գանգատ ու բողոք ունեմ, ինչո՞ւ հայ ժողովրդի հետ չեն միաձայն բողոքում: Ինչո՞ւ այս ցաւատանջ իրոշութիւնը որ իրագործուել է հայերի հանդէպ չեն հաստատում: Ինչո՞ւ իրենք եւ աշխարհի որոշ երկիրները 20րդ դարի առաջին ցեղասպանութիւնը (հոլոքոստը) չեն ընդունում: Ինչո՞ւ այս գերպետութիւնները որ ցաւօք սրտի որոշները այս յանցագործութեան մասնակից եւ հովանաւորները են եղել, լուռ են:

Ինչո՞ւ Թուրքիայի պետութեան չեն ստիպում որ հայ ժողովրդից ներողութիւն խնդրեն եւ գաւթուած հողերը իրենց պատմական եւ իրաւական տէրերին, որ պիւռուած են

աշխարհով մէկ, վերադարձնեն: Ինչո՞ւ, ինչո՞ւ: Այս մտքի մէջ էի որ հեռախօսի գանգը միտքս անջատեց, ընկերոջս յոգնած ու տխուր ձայնը լսեցի թէ CNN-ը նայլի ու լսափողը վար դրաւ: Հեռուստացոյցի էկրանի վրայ մի հրապարակում մի մարդ էր երեւում, գետին ընկած եւ մի խումբ մարդիկ եւ համազգեստով ոստիկանները մարդկանց հանգաստացնում էին, ոմանք պարզապէս դողում էին, ոմանք արտասուում, երբ կարմիր դրօշակը սպիտակ մահիկով երեւաց, ինքնաբերաբար ասացի՝ Թուրքիայում է: Իսթանպուլ քաղաքի մի ծանօթ հրապարակ (երկու անգամ եղել եմ այնտեղ) որտեղ Ակօս երկրեցու՝ հայերէն-թրքերէն թերթի գրասենեակը այնտեղ էր, էկրանի վրայ Ակօսի ցուցատարիտակը երեւաց եւ աւաղ գգնուած մարդը Ակօսի երիտասարդ եւ բանիմաց իմբազդիւն էր:

Տարիներ նրա ազնիւ եւ աչքառու գործունէութիւնը, յարատեւ ու անխոնջ աշխատանքը՝ մարդկային գանգուածների ուշադրութեան առարկայ էր, մանաւանդ որ Ակօսը թրքերէն էլ էր տպագրուած որ թուրք ժողովուրդն էլ նրա գաղափարներին եւ աշխարհայեացքին տեղեակ լինի: Նրա գրուածքները տպագրուած էին հայերէն եւ եւրոպական թերթերում: Նա ուզում էր թուրք անտեղեակ գանգուածներին փաստել որ Թուրքիայում փոքրամասնութիւնների՝ յատկապէս հայերի հանդէպ ցեղասպանութիւն է կատարուել եւ նրանց պապերը հողերը գաւթել են եւ ունեցուածքներն ու հարստութիւնները թալանել: Նա որոշ խօսքերի համար պետութեան կողմից հետապնդում էր եւ դատարան էր կանչուել որ պարտաւորուած լուր կամ երկրից հեռանար: Նա ասել էր «Ես այս երկրում ծնուել եմ, այստեղ էլ կը մեռնեմ»:

Այո եկէք, Տիւնքին այս նորագոյն հերոսին լաւ ճանաչենք: Մնուել է Մալաթիայում 1954ին, երբ Մալաթիայի հայկական բազմութիւնը համարեայ դատարկուեց, եօթ տարեկան հասակում ընտանեօք իսթանպուլ փոխադրուեցին: (Ժամանակին իսթանպուլում 400 հազար հայ բնակիչներ կային եւ այսօր միայն 60 հազար): Տարեկան եւ միջնակարգ ուսումը ստացել է հայկական դպրոցում, յետոյ քաղաքի համալսարաններից մէկից աւարտական է ստացել անասնաբուժութեան ճիւղում եւ նոյն համալսարանում նաեւ հետեւել է լեզուաբանական, գրականութեան եւ փիլիսոփայական գիտութիւններին աւարտելուց յետոյ կամաւոր աշխատել է Ակօս իմբազրութիւնում, յետագայում աշխատել է որպէս վերլուծող եւ ապա որպէս իմբազդի: Նրա նպատակն էր որ 1915 թուի ցեղասպանութիւնը թրքերէնով բացառապէս թուրք անտեղեակ մեծամասնութեան, լուսաբանել եւ համոզել հանրութեան որ այդպիսի պատմական արհաւիրքի իրականութիւնը անհերքելի է: Նա ուզում էր մէկ միլիոն բռնութեամբ իսլամացած հայերին պատգամել որ իրենց պապերի իրաւունքները բռնադատուած են, քրիստոնեայ եւ իսլամացած հայերը պէտք է միանան եւ միասնաբար պայքարեն եւ պահանջեն իրենց կորցրած ինքնութիւնը եւ ազատութիւնը: Թուրքիայի սահմանադրական օրէնքի 301-րդ կէտը պէտք է վերացուի, որպէսզի Թուրքիայի բոլոր հպատակները հաւասար իրաւունքներ

տէր դառնան: Հրանդը դեռ ուսանող ժամանակ բանաստեղծութիւն արտասանելիս որ պիտի ասեր ես ազատ եմ թուրք եմ, այսպէս ձեւափոխուեց եւ ասաց, ես ազատ եմ Թուրքիայի հպատակ, բայց թուրք չեմ, ես հայ եմ: Նոյնպէս լրագրողների համագումարում մի լրագրող հարցին այսպէս պատասխանեց: Մենք հայերս մեր հողերի վրայ աչք ունենք, հողերի որը Արեւելեան Անատոլիայ կամ Արեւմտեան Հայաստան էր կոչուած: Իրարանցում եղաւ: Այս խօսքը ամբողջ աշխարհի հայութեան լրագրող դարձաւ, «մեր գաւթուած հողերը մեզ վերադարձրէք», այո 21րդ դարում հայ դատի պայքարը նոր ընթացք ստացաւ:

Այո այս խօսքերը Հրանդ Տիւնքինն է որը Յոժուուար 19ին 2007, 21րդ դարում առաջին հայ գոհը դարձաւ մէկ դար ցեղասպանութիւնից յետոյ: Ուրեմն պայքարը շարունակուած է եւ յանցագործները դեռեւս յանցաւոր մտքեր ունեն, եւ յանցագործների հովանաւորները խուլ եւ կոյր են եւ 92 տարի ցեղասպանութեան անդրադարձը չեն նկատում են չեն լսում: Ի՞նչ պէտք է ասել եւ ի՞նչ պէտք է անել, այս քառեակը չի շեցի՝ «Ես չեմ ասում Փիւնիկ եղիր կամ թիթեռ, երբ կրակն ես ընկնում տղամարդ եղիր»:

Ողջոյն քեզ ժամանակի փիւնիկ սիրելի Տիւնք որ փիւնիկի պէս 92 տարի առաջ ցեղասպանութեան հրդեհը բոցավառեցիր 21րդ դարում եւ մոխիրների միջից յառնելով մեզ առաջանորդեցիր՝ դէպի անմահ նահատակների իրաւունքների վերականգնման ու պայքարի ուղին: Դու սիրելի Հրանդ դու ժամանակի Քրիստոսը եղար եւ քո մահով մեր հէզ գոհերին նոր ոգի ներշնչեցիր եւ արթնացրիր բոլորին խորը քնից: Իրաւունքը պէտք է ստանալ եւ պայքարը շարունակուած է:

Սիրելի Հրանդ դու մեր ժողովրդի ցայտուն դիմագիծն ես մեր Արարատի պէս անսասան ու գուլալ ու պարզ ինչպէս իմ հայրենիքիս մեծ Հայաստանի մաքուր օդը: Դու դարուայ ամենամեծ ու նուիրական գոհն ես ու փրկիչը մի ազգի որ երկար տարիներ տառապել է բռնակալ պետութիւնների եւ վայրի ցեղերի ծանր լուծի տակ, դու եղար հայագրի նորօրեայ հերոսը եւ մեր ազատութեան սիմբոլը:

Սրանից յետոյ մեր փառապանծ Վարդանանքը միայն չի շատակելի փառքերից չի լինի, գուցէ սիրելի Հրանդ քո անունով էլ այսուհետ Յոժուուար 19ին մեծ յաղթանակի տօն պիտի չի շատակուի: Դու

այնքան մեծ ես որ քո մահով անմահացար, յանցագործութեան թելադրողները կոկորդիլոս արցունքներով քո մահուան ցաւակից եղան, Ապտիւլ Համիդեան եւ թալիպութեան նմանութեամբ, բայց ի սրտէ ուրախ էին եւ կեղծաւոր ու խաբեբայ պետութիւններ եւս ցաւակցեցին, յայտարարութիւններ արին, բայց դեռեւս չեն ցանկանում ցեղասպանութիւնը ընդունել եւ հաստատել: Սիրելի Հրանդ քո մահը արմէնների փայլուն ապագայի աւետիսն է: Նոր Հայաստանի, մեր գաւթուած հողերը վերադառնալու գաղափարի հիմնաքարը դրեցիր, ամբողջ աշխարհում հայ երիտասարդների նորօրեայ առաջնորդը դու եղար, նրանք պէտք է քո ճանապարհը շարունակեն եւ քո պանծալի անունը նրանց շրթներին յաղթանակի երգ լինի: Այսուհետ պէտք է մեր նորածինները այդ անունով մկտուեն: Թող Տիւնքեր եւ Հրանդներ շատ ունենանք:

Հայ երիտասարդ պատրասուելիք, ով հայ պատանի սովորիր որ Տիւնքի պէս քո ազգը եւ Հայրենիքը սիրես, Տիւնքի պէս կեանք վարես նրա պէս արի կեցուածք ունենաս, բաւական է այսօրուայ փուճ ու չիմար կեանքին հետեւես, կեանքը միայն ուտել եւ քնել չի: Պէտք է լիարժէք ապրել: Մեր երագած մեծ նպատակին հասնելու համար պէտք է ընտրել Տիւնքի նուիրական ճամբան, թող նրա խօսքը մեզ համար լրգունգ լինի:

Մենք հայերս մեր գրաւած հողերի վրայ աչք ունենք, վերադարձրէք այդ հողերը իսկական եւ արժանի տէրերին:

Այո, մի խօսք որ ամենագործող գէնքից էլ աւելի գորաւոր է, որի մէջ անսահման քաջութիւն է զգացում: Ճիշտ է որ մենք քանակով քիչ բայց Տիւնքի նման մարդու խօսքը ցնցեց Թուրքիայի պետութեան եւ ստիպեց նրան 21րդ դարում այսպիսի նողկալի ու փոքրոգի որոշումով նրան թեուորի ենթարկեցին: Ի հեճուկա թշնամու տմարդութեան, քաջաբար գոհուած Տիւնքը անել վիճակի մէջ է թողել պետութեան որ ինչպէ՞ս արդարանան մեծ պետութիւնների մօտ եւ ի՞նչ բացատրութիւն տան:

Ի՞նչ ունեն որ ասեն, այսօրուանից Տիւնքի պէս մարդկանց ծնունդը սկսեց եւ նրա զծած ճամբով են ընթանալու ծեր թէ երիտասարդ հայր պէտք է Տիւնքի պատուարժան պատմուճանը հագնեն եւ նրա ուղին շարունակեն, իրենց երեխաների անունը Տիւնք ու Հրանդ կնքեն, եւ Տիւնքի հերոսութեան երգ յօրինուի ու այդ երգը ամօթանքի սիւնին գամի մարդասպաններին:

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
Ամէն Կիրակի երեկոյեան  
ժամը 10:00-ից 12:00  
Կլէնտոյլի 26-րդ կայանից

**«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»**  
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ  
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ  
ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆԹ  
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՃԻԱՏԱՆՔԻ ՇԵՐՈՍ ԸԻՄՆԱԴԻՐՄԱՐԳԱՐ ՍԵՂՐԱԿԵԱՆ

Շարունակուած էջ 8-էն

Վարպետ Մարգար հիմնուեց այն ճշմարտութեան վրայ, որ խաղողի նոյն տեսակը տարբեր հողերի վրայ ու կլիմայական պայմաններում ձեռք է բերում տարբեր յատկութիւններ: Այս հիման վրայ նա որոշեց հայկական տեսակաւոր կոնեակները պատրաստել միայն Արարատեան դաշտի խաղողներէ: Ներմուծուած կոնեակային սպիրտները օգտագործում էր բացառապէս սովորական կոնեակներ պատրաստելու համար: Երբ միջազգային կոնեակագործութեան մէջ միտում կար կոնեակի սպիրտ պատրաստել մէկ կամ երկու տեսակի խաղողի գինուց, Վարպետ Մարգար կոնեակի գինի էր ստանում մի քանի տեսակի խաղողներից (Գառան Դմակ, Ոսկէհատ, Մսխալի Կահեթի եւայլն): Նա գտնում էր, որ Արարատեան դաշտի այդ խաղողների փունջից ամէն մէկը իր քիմիական, ֆիզիկական, կենսաբանական յատկութիւնները փոխանցում էր գինուն, որոնք իրենց իւրաքանչիւր թիւնները տարբեր եղանակներով արտայայտում են կոնեակի սպիրտում ու կոնեակում: Աւանդական կոնեակագործութեան մէջ կոնեակի թնդութիւնը իջեցնելու համար օգտագործում էին թորած կամ փափկացրած ջուր: Վարպետ Մարգարի ու նրա գործակիցների ստեղծած տեխնոլոգիայով հնարաւոր դարձաւ օգտագործել Հայաստանի լեռնային աղբիւրների գուլալ ջուրը: Երբ 60-ական թուականներին Երեւան բերեցին տարբեր աղբիւրներից ջուր եւ դա սկսեցին օգտագործել Երեւանի կոնեակի գործարանում, հայկական կոնեակը զգալիօրէն փոխուեց: Վերակառուցեցին կոնեակի գործարան եկող ջրատարը: Հայ կոնեակագործութեան մէջ առաջացան երկու իրարամերժ ուղղութիւններ: Որոշ հեղինակները ելնելով խնայողութեան եւ հնացման ժամկէտը կրճատելու մտահոգութիւնից առաջարկեցին կոնեակի սպիրտը լցնել մեծ փակ ամանների մէջ, այնտեղ սեղանաւոր կտրտուած կաղնու փայտ եւ վերջինս խառնող սարքաւորում: Այսպիսով խիստ նուազում էր կոնեակի սպիրտի ցնդումը ու կրճատումը հնացման ժամանակը: Այդպիսով կորչում էին հայկական կոնեակի առաւելութիւններն եւ փաստօրէն վերանում էր տեսակաւոր կոնեակի արտադրութիւնը: Վարպետ Մարգար գտնում էր, որ կոնեակի ցնդումը ու կոնեակի սպիրտի եւ թթուածնի հաստատուած պարտադիր բարդադրաստարն է: Կաղնու տակաւուի մէջ կոնեակի սպիրտը փոխում է ոչ միայն իր գոյնը, այլ նաեւ իր ծաւալը, թնդութիւնը, տեսակարար կշիւրը եւ բաղադրիչ մասերը: Այս պատճառով էլ Վարպետ Մարգար գտնում է, որ սկզբնական փուլում կոնեակի սպիրտով լցուած տակաւոր պետք է սեղանաւոր թթուածնով հարուստ ու համեմատաբար տաք փակ վալրում: Հնացման ընթացքում այն աստիճանաբար պէտք է իջեցնել յարկ առ յարկ վարձ մինչեւ նկուղային յարկը: Այդ ընթացքում կարող է շոգիանալ սպիրտի մինչեւ 10%-ը: Հնացման ընթացքում ստուգում է կոնեակի սպիրտի հնացման կարողականութիւնը: Այն սպիրտը, որ որակում է որպէս հնացման կարողականութիւնը կորցնող կամ կորցրած լաւագոյն դէպքում հնարաւոր է օգտագործել լոկ սովորական, աստղանի կոնեակ պատրաս-

տելու համար: Վարպետ Մարգարի մշակած նոր տեխնոլոգիան հնարաւորութիւն է ստեղծում, որպէսզի բարձր սպիրտայնութեան պայմաններում պահպանուի կոնեակի նրբութիւնը, մեղմութիւնը, բուրումնակտութիւնը, թաւաշնութիւնը եւ շոյանքը: «Երեւան» մակնիշի կոնեակը, որը պատրաստուած է բեւեռագնացների համար, թէեւ ունի 57% սպիրտայնութիւն, բայց իր բուրմունքով ու մեղմութեամբ շոյում է կոկորդը ու քիմքը լցնում բուրումնակտութեամբ: «Դվին» մակնիշի կոնեակն ունի 50% սպիրտայնութիւն, բայց բացառապէս մեղմ է, եթերային ու ծիրանահամ: Նոյնքան սպիրտայնութիւն ունի «50 Տարի» կոնեակը եւ աչքի է ընկնում իր փափկութեամբ ու հաճելիութեամբ: «Հայաստան»-ի սպիրտայնութիւնը 45% է եւ պահպանում է իր մեղմութիւնն ու նուրբ մրբահամութիւնը: Նշենք, որ սովորաբար կոնեակների սպիրտայնութիւնը տատանում է 40%-43% միջեւ: Նոյն տեխնոլոգիան հնարաւորութիւն է դարձնում, որ ստեղծուեն բարձր հնացուածութիւն ունեցող կոնեակի տեսակներ: «Ախթամար», «Յոբելեանական», «Հայաստան», «Դվին» մակնիշի կոնեակները ունեն 10 տարուայ հնացում, «Տօնական»-ը 15, «Վասպուրական»-ը 18, «Նաիրի»-ն՝ 20: Կան նաեւ 40, 50, 60 տարեկան կոնեակներ: Յաճախ իւրաքանչիւր կոնեակի որակի, բուրմունքի, եւ համի առանձնապատկութիւնները ցուցադրելու համար Վարպետ Մարգարը ամէն մի կոնեակի տեսակից մի քիչ լցնում էր տարբեր բաժակների մէջ: Որոշ ժամանակ անց դրանք դատարկում էր ու թողնում, որ սպիրտը ցնդի: Այն բաժակներից, որոնց մէջ լցուած էր իրաւ հայկական անուանակիր կոնեակները գալիս էր շատ շոյող, անուշ բուրմունքի ու հաճելի ծաղկափունջի հող: Այդ մնում էր օրերով: Ոչ որակաւոր կոնեակների բաժակից աստիճանաբար նուազում ու շուտով կորչում էր բուրմունքը: Լաւ կոնեակը նման է որակաւոր օճանելիքի, որի առանձնայատուկ հոտ երկար մնում է, երբ անտրակ օճանելիքները շուտով կորցնում են այն: Իւրաքանչիւր անուանակիր կոնեակ ունի իր դեղատոմսը, որտեղ նշուած է թէ տուեալ տեսակը պատրաստելու համար որքան հնացուածութեան սպիրտից ինչքան պէտք է օգտագործել: Նշուած են նաեւ անհրաժեշտ միւս բաղադրամասերի որակն ու քանակը: Երբ ձեռնարկում է տուեալ տեսակի կոնեակի արտադրութիւնը այդ բոլորը լցնում են մի մեծ ցինկապատ փակ ցիստերնի մէջ: Այստեղ վերջանում է գիտելիքի, իմացութեան սահմանը եւ սկսում է մարդկային գործօնը, համտե վարպետի քիմքը, համտե սելու նրա աստուածատուր կարողականութիւնը: Քիմքով նա վերջնական կէտին է հասցնում պատրաստուող կոնեակի համար պարտադիր գոյնը, շաքարայնութիւնը, թնդութիւնը, համային յատկութիւնները, մեղմութիւնը, նրբութիւնը, թաւաշնութիւնը եւ այլն: Այդ բոլորից յետոյ պատրաստուած խմիչքը, մինչեւ շիշերի մէջ լցնելը, տուեալ ամանի մէջ պահուած է (հանգստանում է) մի քանի ամիս: Նոր տեխնոլոգիան բնորոշում է ոչ միայն կոնեակագործների փորձառութեամբ, վարպետութեամբ, գիտելիքներով, այլ նաեւ համտե վար-

պետի, գլխաւոր տեխնոլոգի քիմքի առանձնապատկութեամբ: Վարպետ Մարգարի նման քիմք ունեցող համտե հագուազիւտ է պատահում: Կոնեակի հայրենիքի, Ֆրանսայի, աշխարհահռչակ «Քամիւ» (Camus) կոնեակի հաստատութիւնը արձանագրելով հայ կոնեակագործ վարպետի բացարձակ համտեութիւնը նրան շնորհել է «Համտեութեան Ասպետ» բարձր կոչումը ու նրան պարգևատրել ընկերութեան Արծաթէ Մեծ Մեդալով: Իսկ Պինո Քրիստիան Փօլը Ֆրանսիայի վարչապետ եղած (1956-58) օրերին Հայաստան այցելած ժամանակ մերժել է իրեն մատուցուած «Նախորդ»-ը ու նախընտրել օգտագործել հայկական անուանակիր տեսակաւոր կոնեակները: Դաշնակիցների Եալթայի գաղթաժողովի օրերին (Փետրուար 4-11, 1945) Ստալին Միացեալ Թագաւորութեան Վարչապետ Ուինստոն Չրչիլին (1874-1965) հիւրասիրում է «Դվին» մակնիշի հայկական կոնեակով: Վերջինս այն շատ է հաւանում ու խնդրում է ԽՍՀՄ-ի դեկավարին, որ իրեն անընդհատ մատակարարի հայկական այդ խմիչքով: Ստալինի մերձաւորները յայտնում են, որ Չրչիլը աւելի շատ է իրենց դեկավարին անհանգստացրել է կոնեակի մատակարարման հարցերով, քան քաղաքական ու ռազմական: Մի օր էլ, 1949-ին անգլիացի դեկավարը բողոքում է «Դուրի» որակից: Պարզում է, որ կեղծ ամբաստանների հիման վրայ վարպետ Մարգարը բանտարկուել է ու իր անմեղութիւնը ապացուցելուց յետոյ տեղափոխուել Օդեսա ու ստացել Ուկրաինայի կոնեակի արդիւնաբերութեան գլխաւոր մասնագէտ: Միկոյեանին յանձնարարում է կազմակերպել վարպետի հայրենիք վերադարձը: Մարգար Սեղրակեան ստեղծում է այդ հանրապետութեան լաւագոյն կոնեակը «Ուկրաինա» անունով: Այսպիսով ապահովվում է Չրչիլի մատակարարումը որակեալ «Դուրի»-ով: Անվտանգութեան բանտից դուրս գալու օրը, Մարտի 31-ը, վարպետը դարձնում է իր ծննդեան օրը՝ յայտարարելով որ ինքը վերածնունդ, վերակենդանացաւ այդ օրը: Վանի կուռի որբ մարտիկը չէր յիշում ոչ իր ազգանունը եւ ոչ էլ ծննդեան օրը: Աներոջս, Մարգար Սեղրակեանի հետ գնացել էի Թբիլիսի: Վրաստանի գինեգործներն ու կոնեակագործները Վարպետ Մարգարին հրաւիրել էին: Մեծ մի դահլիճ սեղանը դասաւորուել էլ Ո ձեռով: Սեղանի գլխին նստած էր վրացական կոնեակի նահապետը՝ Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Վախտանգ Յի-ցիլիլին իր շքախմբով: Երբ վարպետ Մարգարը մտաւ դահլիճ վերջինս դիմաւորեց նրան ու մինչեւ սեղանի գլուխը ուղեկցեց ու նրան նստացրեց վերապահուած միակ բազկաթոռին: Երբ ողջ դահլիճը ոտքի կանգնած խմում էր հայ վարպետի կենացը Վրաստանի հերոսը կրծքից հանեց իր Հերոսի շքանշանը եւ ծափահարութիւնների ծովի տակ այն տեղաւորելով իր հայ գործընկերոջ կրծք-քին ասաց. «Այս մեղալը առաջինը դու պէտք է ստանայիր: Դու մեր բոլորի Մեծ Վարպետն ես»: Մարգար վերադարձրեց շքանշանը գովերգելով իր ընկերոջ ասպետական կեցուածքը ասելով որ ինքը պատուուած է զգում խորհրդային որեւէ կոնեակագործի արդարացի գնահատմամբ: Բացառիկ ու խորապէս յատկանշական էր երեւոյթը: 1971-ին Երեւանի կոնեակի Գործարանի Գլխաւոր Տեխ-

նոլոգ, ՀՍՄՀ Վաստակաւոր Ինժիներ, Գիւղատնտեսական Ինստիտուտի դասախօս, ԽՍՀՄ Համտեակի Կետրոնական Յանձնաժողովի անդամ, ԽՍՀՄ-ում տեսակաւոր կոնեակի ստեղծող ու կոնեակի արտադրութեան նոր տեխնոլոգիայի հիմնադիր, միջազգային համբաւ նուաճած Մարգար Սեղրակեանին շնորհուեց Սոցիալիստական Աշխատանքի Հերոս կոչումը: Կարէն Սերոբի Դեմիրճեանը նոր էր նշանակուել Հայաստանի կուսկենտրոնի Առաջին քարտուղար: Իրաւապահ մարմինների հետ իր ունեցած անդրանիկ հանդիպման ժամանակ նա ասաց. «Աններելի յանցանք է հայկական կոնեակը կեղծողների ու կոնեակի մաքանենգութեան դէմ պայքարի թուլացումը: Շատ սեղեւում մեզ ճանաչում են մեր որակաւոր կոնեակների միջոցով: Հայկական կոնեակով մենք կարողանում ենք լուծել հանրապետութեան համար շատ կարեւոր հարցեր: Կոնեակի ապրանքափոխանակութեամբ մենք կարողանում ենք պլանից դուրս ձեռ բերել լրացուցիչ անդամները ու հումք: Այսպիսով, հայկական կոնեակի որակագրկումն ու կեղծումը լղի է տնտեսական, բարոյական ու ազգային փնամներով»: Չորս սկզբունքների վրայ էր խարսխուած Վարպետ Մարգարի կեանքը՝ աստուածապաշտութեան, ընտանիքակենտրոնութեան, արհեստավարժ նուիրուած աշխատանքի եւ անշահախնդիր հայրենասիրութեան: Աստուածապաշտութիւնը նա համարում էր սիրոյ եւ բարոյական վարքի հիմքը: Նա գտնում էր, որ բնականոն մարդկային ընկերութեան ու իրաւ ազգի նախապայմանը առողջ ընտանիքն է: Ընկերային, տնտեսական, մշակութային ու հոգեւոր անհնարին է առանց նուիրուած ու արհեստավարժ աշխատանքի: Առանց հայրենասիրութեան մարդ կորցնում է պատկանելութեան հիմքը: Նա իր Հայաստանակէտրոն հայրենասիրութիւնը արտայայտում էր ոչ միայն իր ստեղծագործական ու նուիրուած աշխատանքով, այլ նաեւ ժողովրդական դիւանագիտութեան: Աշխարհի չորս կողմերից տարբեր դիրք ունեցող մարդիկ էին գալիս կոնեակի Գործարան: Եւ Վարպետը նրանց հետ տանում էր հետեւողական դիւանագիտական աշխատանք: Մի անգամ, Կովկասեան ուժերի գինավարժութիւններից յետո հիւր է գալիս ողջ հրամանատարութիւնը՝ կազմում ունենալով տասնեակ գեներալներ: Յարմար պահին Մարգար Սեղրակեանը Խորհրդային Բանակի կենացը բաժակ է բարձրացնում ասելով. «Խմում եմ այնպահի կենացը, երբ ձեր հրամանատարութեան տակ խորհրդային գինուորը կը հասնի Վան ու հայկական դրօշը կը բարձրացնի Վանի Բերդի վրայ»: Բոլոր ներկաները ծափահարում են ու խմում առաջարկուած կենացը: Մի ուրիշ անգամ գործարան հիւր է գալիս Թրքական Հանրապետութեան կոմկուսի քարտուղարը: Նա շատ է հաւանում հայկական կոնեակը ու զարմանում է, թէ այդքան քիչ է արտադրուած: Վարպետ Մարգարը իրեն չի կորցնում ու պատասխանում. «Այդ հարցի գաղտնիքը ձեր ձեռքում է: Թուրքիայում յաջողեցրեք ընկերավարական յեղափոխութիւն եւ մեր հողերը տուէք մեզ: Մենք էլ այդ հողերում խաղողի այգիներ կը սնկենք, գինի կը պատրաստենք ու դրանից համով կոնեակ կը ստանաք ու ձեզ առատօրէք կը նուիրենք»:

### ՊԻՏԻ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՏԵՐ ԿԱՆԳՆԻԼ ՄԵԶԻ ՑՈՅՑ ՏՐՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ

#### Շարունակում է 1-էն

այս անխոհեմ անտարբերությունը շարունակուելը մարդկությունը էմ ցցում անյո ահաւոր չարիք տամկեան սուրի պէս կախում պիտի մնար աշխարհի ժողովուրդներու պարանոցին վրայ: Նաեւ, ան պիտի մշտական սպառնալիք դառնար մեր մուրթակի ապահովութեան եւ խաղաղութեան:

Այդ գիտակցութիւնն է, որ սկսած էր առաջնորդել արդի միջազգային բաղադրական մտածողութիւնը: Այսօրուան դրութեամբ, աշխարհով մէկ - ներառեալ թուրքիան, Իսրայէլը, Գերմանիան, ԱՄՆ - տակաւ կը խտանան բաղադրական, գիտական, կրօնական, մտաւորական եւ նոպէլեան մրցանակաւոր հանրածանօթ հեղինակութիւններու շարքերը: Անոնք բարձրաձայն կը պահանջեն Հայոց Ցեղասպանութեան նախադրման եւ դատաւարտումը: Անոնք, անշուշտ, նպատակ ունենան նախադրման դեպքերու կանխարգիլման հրամայականը:

Նոյնպէս, կը բարձրանայ Հայոց Ցեղասպանութիւնը դատաւարտող եւ նախադրման երկրներու թիւը: Ճրանասայի օրինակով ու անկախ առաջ անցնելով, որքան ալ անսպասելի եղած ըլլար, Հայոց Մեծ եղեռնի ժամանակաշրջանի թուրքիոյ դաշնակից եւ Ցեղասպանութեան գործադրութեան ներքին փուլերուն մօտէն ծանօթ, իսկ արդի օրերուս եւրոմիութեան նստաշրջանի նախագահ երկիր, Գերմանիա՝ եւրոմիութեան մակարդակով օրինագիծ կ'առաջադրէ, որ ոչ միայն յանցագործութիւն նկատուի Հայկական Ցեղասպանութեան ժխտումը, այլ նաեւ, այդ մասին «տեղահանութիւն» բառը գործածելով խօսիլն իսկ:

Անդին, Ազգերու Միացեալ Կազմակերպութիւնը ներողութիւն կը խնդրէ Ռուսաստանի ցեղասպանութեան 15-րդ տարեդարձին նուիրում ցուցանելու արքայազնուհի ըլլալուն համար: Ցեղասպանութեան երկու թուրքիոյ նշումին վրայ, որովհետեւ հոն յիշատակութիւն կը գտնուին նաեւ հայոց մէկ ու կէս միլիոն գոհերը: Մինչ «Նիւ Եորք Թայմզ» վախկոտ կ'անուանէ Ցեղասպանութիւն բառէն վախցողները:

Կ'ակնկալենք ՄԱԿ-էն, որ այսօր իննսուն տարի ետք, ԻՆՔԵԻՍ կը խոնարհի հայ ազգի Մեծ եղեռնի միլիոնավոր գոհերուն անթարալիշատակին առջեւ, բարձրաձայն նախադրման Ցեղասպանութիւնը ու դատաւարտելով զայն:

Այս պարբերութիւնը եզրապագելու համար, աւելցնենք նաեւ, որ ԱՄՆ-ի կապակցութեամբ, անգամ թուրք պատմաբան Թանէր Ահմադ, մեկնելով այն հանրածանօթ իրողութենէն, որ «Ամերիկայի մէջ ոչ մէկը կ'ըսէ թէ թուրքերը ցեղասպանութիւն չեն ըրած», կ'առաջարկէ, որ ներկայացուցանակ ժողովը վաւերացնէ հայկական բանաձեւը - հար-

ցը կը վերաբերի էտրմիֆի, ճրէնք Փալոնի, Ճ. Ռատանովիչի եւ Ճօ Նորմալըրկի ներկայացուցած բանաձեւին - որպէսզի «այս չինական տանջանքը այլեւս վերանայ»:

Մատի վրայ կը համրուին այն պետութիւնները, ինչպէս պարագանէ դեպքան շնորհ Մորկերնաուններու եւ հիւպատոս Լեսլի Տէյվիսներու ԱՄՆ-ի, որոնք տակաւին կը յամառին սարսափիլ «Ցեղասպանութիւն» բառը գործածելու, թող որ մնայուն նշումի տակ կը գտնուին իրենց արդարադատ ժողովուրդներուն կողմէ, որոնք կը պահանջեն նախադրման եւ դատաւարտում թուրքիոյ սարքած Ցեղասպանութեան:

Տարակոյս չկայ, որ արդի ժամանակներու բոլոր տուեալները կ'ընթանան դէպի 1915թ. Ցեղասպանութեան նախադրման ու դատաւարտումը, որոնք նոր պարտաւորութեան տակ կը դնեն հայադաւան մտածողութիւնը:

Մեր նախարանին մէջ կատարած հարցադրումներուն վնասարկումները եւ անոնցմէ բղիժած հետեւութիւնները պիտի նշողորոշեն մեր ներկայ եւ գալիք գործընթացները: Ոչ ինչ թողունք պատահականութեան, ինչպէս ըրինք լրիւ ինք տասնամեակ, ուր շեշտուած մնաց անմիաբան գործընթաց մը:

Գիտենք ի՞նչ կաղապարի, հայոց հաշույն մշակում ի՞նչ բնոյթի եւ դիւանագիտական ինչ-ինչ հաշիւներու տուրք տուած նախադրման պիտի չի բաւարարեր մեզ: Ոչ ինչ պիտի չի զիջէ ինք, վստահաբար: Անսակարկելի էր մեր մէկ ու կէս միլիոն նահատակներու արդար իրաւունքը: Պիտի չի՞ գոհանայինք պարզ դատաւարտումով: Իր պատմական հողերէն արմատախիլ դարձած, մէկ ու կէս միլիոն նահատակ տուած, կոթողային մշակոյթ եւ հսկայական անշարժ եւ շարժուն հարստութիւններու թողած պահանջատէր ժողովուրդի մը համար, այդ բոլորը ունենին իրենց արեան, հողային ու ազգային անսպառ ժառանգութիւններու արդար գինը, որ պիտի հատուցուէր անպայման, ոչ կամ կանուխ:

Հոս հանելու համար նախապայման է մեր ազգային, մշակութային, բարեկամական, բաղադրական, դիւանագիտական եւ այլ մակարդակի ազգային կարելիութիւններու կազմակերպումը, շնորհիւ Հայաստան-Սփիւռք Միացեալ Կեդրոնական Մարմնի ստեղծումով, որով կարելի կընայ դառնալ համադրել մեր պահանջատիրական պայմարը, տակաւ ընդլայնելով մեր միջազգային ծանօթութիւններու, բարեկամութիւններու եւ գործակցութեան շրջանակները, եւ ծրագրելով յետագայ ռազմավարական նախաձեռնութիւնները:

Ազգովին, տէ՛ր կանգնինք մեզի ցոյց տրուած միջազգային գորակցութեան:

### ԱՆԹՈՆԻԱ ԱՐՍԼԱՆԻ ԱՐՏՈՅՏՆԵՐՈՒ ԱԳԱՐԱԿԸ

#### Շարունակում է 14-էն

մը պէս կը պայթի անտեղեակ հայ բնակչութեան գլխուն: Հազիւ պատահածին իրազէկ դարձած, Սմբատ կը խողխողուի դաժանօրէն, իր ազարակը ապաստանած բոլոր այր մարդերով: Իսկ մնացեալ կիներուն, մանուկներուն եւ ծերերուն կը վիճակուի տեղահանութեան, բռնազաղթի արիւնտտ ճամբան դէպի Տէր Զօր, անշուշտ միշտ ենթակա՝ ճանտարմներու կամայական խուժուժութեան, սովի եւ վարակի, ինչպէս նաեւ քրտական աւագա-կախում բերու կողոպուտին եւ առեւանգումներուն:

Այս բոլորը, Անթոնիա Արսաւանի գրիչով կեանքի կոշուած են ծայրագոյն պարզութեամբ եւ զուսպ նկարագրականով, որոնք սակայն շնորհիւ աչք իրապաշտ ու բնական ոճին կը զգենուն յուզականութեան շատ զօրաւոր լիցքաւորում եւ թելադրականութիւն: Քարոզչութիւն եւ կամ անպայման ընթերցողը համոզելու եւ յուզելու ոչ մէկ ջանք: Գուցէ այս է վէպին յաջողութեան գաղտնիքը. խուսափիլ կողմնակալ մտտեցումներէ եւ աւելորդ յուզական թանձրութենէ, չխրտչեցնելու համար օտար ընթերցողը, այլ պարզապէս հրաճանք իրողութիւնը աւարկայականօրէն, առանց ողբասացութեան, զուսպ արժանապատուութեամբ: Հետեւանք լաւ ընդունելութիւնն է որ դրսեւորուած է «Գամփիլօ» գրական մրցանակով գոր իտալական գրական հասարակութիւնը շնորհած է Անթոնիա Արսաւանին, այս առաջին վէպին համար: Նշենք նաեւ, թէ իտալացի հռչակաւոր շարժանկարի բեմադրիչ Թավիանի եղբայրները արդէն շարժանկարի վերածած են Արսաւանի վէպը եւ Փետրուարին գայն պիտի ներկայացնեն Պեռլինի շարժանկարի միջազգային փառատօնին:

Արսաւան, ըսինք, անկողմնակալ մտտեցում ցոյց տուած է թուրքը որպէս միայն արեւնարբու գազան

չներկայացնելով: Վէպին մէջ թուրքի երեք գործօն տիպարներ ստեղծած է ան, որոնք ունին մարդկային գիծեր, գթասիրտ վերաբերմունք հայ անպաշտպան խլեակներու վերածուած բազմութիւններու հանդէպ եւ ասիկա՝ հակառակ իրենց դէմ սահմանուած իթթիհատական կառավարութեան մահապատիժի խիստ սպանալիքներուն: Տիպարներու այս մարզէն ներս, պէտք է ըսել, թէ խաչաբազուկ ճշգրտութեամբ ստեղծուած են հերոսները, ըլլալ ազգութեան եւ կամ ինքնատուութեան տեսակէն, ապրող, հարազատ ու համոզիչ՝ իրենց առանձնատուկ նկարագիրներով օժտուած:

Վէպին ընթացքը սահուն է հակառակ նիւթին ծանրութեան, որովհետեւ Արսաւան երկարապատուած շարադրանքներէ խուսափած է եւ ջանացած է տալ միայն անհրաժեշտ ու հիմնականը: Այս մարզէն ներս մեծապէս իր նպաստը ընծայած է իր կենդանի, արագ եւ աշխոյժ ոճն ու լեզուն ալ: Պատմութիւն հիւստուածքը կուռ է եւ ամփոփ՝ բացի կնճռոտ վերջաբանէն, ուր ոստիկանական վէպի մը շատուկ դէպքերու, դիպուածներու վերիվայրումներէ խաչաձեւումներ տեղ գտած են, անոնք ալ արդարանալի՝ եւրոպական միջին ընթերցող խաւը ներգրաւելու դիտումով:

Մեծ եղեռնը հասարակութեան նոր հատուածի մը ծանօթացնելու կարեւոր փորձ մը՝ այս վէպը եւ նաեւ յաւելեալ ապացոյց մը, որ արժանանումներուն եւ արեան կանչը յաճախ կը գտնէ բացառապատու իր ճանապարհը, թէ օտարութեան մէջ իր մայրենի լեզուն իսկ կորսնցուցած հալը պէտք չէ անպայման որակները որպէս ուժացած, քանի իր երակներուն մէջ հայու արիւն կը կրէ ան եւ ունի ազգային գիտակցութիւնն ու ծառայութեան ոգին: Այս տեսութեան ամբողջական ապացոյցն է Անթոնիա Արսաւան-Արսաւանեանը իր «Արտոյաններու Ազարակը» վէպով:

**Homenmen Marathon Training Team**

For more information

Call : (818) 425 - 0836  
 E-mail : Homenmen@homenmen.org  
 Visit : www.myspace.com/homenmen

**ԱՊԱԲԻՆՄԱՆ ՄԱՂԱՆՔ**

Թերթիս բարեկամներէն՝ խաչիկ Գարսեւանեան ենթարկուած է վիրաբուժական յաջող գործողութեան մը: Ան այժմ կը բոլորէ ապաքինումի շրջանը իր բնակարանին մէջ:  
 Շուտափոյթ ապաքինում կը մաղթենք մեր յարգելի բարեկամին:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով  
 G.Y.O.1060N.ALLEN.AVE.PASADENA,CA91104

### ՈՉ ԵՄ Է ԾԱՆՕԹ ՀԱՅԱԳԷՏ ՓՐՈՖ. ԼԵՒՆ ԽԱՉԵՐԵԱՆ

«Մէկ լեզու, մէկ ազգ» նշանաբանով առաջնորդուած, եւ դասական ուղղագրութիւնը իրեն մտասեւեռուած դարձուցած Փրոֆ. Լեւոն Խաչերեան, իր մահականացուն կնքեց Ապրիլ 13, 2007ին:

Ան ծնած է Կիպրոս 1924ին: Ան իր երկրորդական ուսումը ստանալէ ետք Պէյրութ, յաճախած է Կիպրոսի «Մեկընեան» դպրոցը, ապա ներգաղթելով Հայաստան ան նուիրուած է գիտութիւններու ակադեմիական աշխատանքներու հայագիտական բնագաւառէն ներս: Մեծ եղած է Փրոֆ. Խաչերեանի ներդրումը հայագիտութեան ասպարէզէն ներս, ուր հեղինակած է աւելի քան երկու տասնեակ աշխատութիւններ եւ ունի մեծ թուով յօդուածներ: Դիտել տանք որ մեծանուն հայագետին աշխատասիրութիւններէն շատեր մաս կազմած են դասագիրքերու:



1981 թուին, Լոս Անճելոս փոխադրուելէ ետք, Փրոֆ. Խաչերեան շարունակած է իր հայագիտական ուսումնասիրութիւնները:

### ԱՊՐԻԼԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Շարունակուած էջ 7-էն

ներին, թէ Չեխոսլովակիայի եւ Հունգարիայի դէպքերից յետոյ, երբ վաշտաբար ճնշուեցին ազատութեան ճիչերը, մի փոքր ժողովուրդ ի՞նչ ռիսկով ոտքի ելաւ Կրեմլի դէմ իր պահանջատիրութեամբ:

Հայաստանի Գրողների Միութեան նախագահ Լեւոն Անանեանը նշելով իր ուսանողական ընկերների լուրջանազան ազդանքը գործունէութեան նուիրուածութեան մասին, գրքի սկզբում գրում է. «1965 թ. Ապրիլի 24-ը հայոց ազգային ոգու վերածննդի պոթիւթիւնն էր, ինքնաբերաբար խոտովութիւն, որի ջանքերը դարձաւ ուսանող երիտասարդութիւնը»: Սա մեր գիտութեան կաճառի՝ Երեւանի պետական համալսարանի ազգին նուիրուած անխնայ եւ իրենց ուսանողների մէջ ազգային ոգու զարթոնքն արթնացնող դասախօսներն ու մտաւորականներն էին, որոնց մեծ մասը Մեծ Եղեռնից մազապուրծ ազատուած ու հայրենիքում ապաստան գտած ծնողների զաւակներ էին, որոնք վառ պահելով նահատակների յիշատակը իրենց հոգում ու ընտանիքում, կեանքերը վտանգելով իրենց ուսանողներին հազցելին հայրենասիրական իտէպով, որով հայ ժողովուրդը գոյատեւել է իր ամբողջ պատմութեան ընթացքում: Եւ ահա այդ հայրենասիրների հոգեզաւակ ուսանողները դարձան նրանց թարգմանիչները, պոթիւթիւն ու հայրենի թուրքիայից պահանջատիրութեան հարցը դրին Կրեմլի առջեւ... Դժբախտաբար, խորհրդային կարգերին կոչը նուիրուած անգրագէտ ու տգէտ ուստիկանները, որոնց «միլիցիա» էին կոչում եւ նոյնիսկ «ոստիկան» բառը վերագրում էին կապիտալիզմին, իրենց անգրագիտութեամբ ու սոցիալիստութեամբ, բնականօրէն, չէին կարող ըմբռնել եւ հասկանալ «ազգայինի» վեհ գաղափարը, որի հետեւանքով վաշտաբար վերաբերուեցին ուսանողութեան հետ: Գուհիկ միլիցիաների արարքը մի դէպքում այնտեղ էր հասել, որ շրջաններից մէկի միլիցիայի բաժանմունք տարուած ուսանող Սամուէլ Վարդանեանի գլխին ջարդել էին ծաղկամանը, հողը լցուել էր վրան, սակ էին. «Հող եւ ուզում, առքեզ հող...» (էջ 13): Մի դէպքում էլ. «Բանտապետը մօտենում էր մեզ

դաժան, քննախոյզ հայեացքով ու հայհոյախառն շարտում. «Հողեր եւ ուզել, հա՞ ..., դէ՞ ձէն հանիր է՞..., հենց ձէն հանես, երեք ամիս եմ սարքելու» (էջ 12): Իսկ որոշ քննիչներ էլ ափսոսանք էին յայտնում. «Ստալինը չկայ, այլապէս ձեզ կը գնդակահարէինք» (էջ 26):

Երկար կարելի էր գրել նախկին ուսանողների իւրաքանչիւրի 2005 թ. գրուած յուշագրութիւնների մասին, ցոյց տալով նրանց հայրենասիրութիւնը եւ աննկուն կամքը հայրենիքի սիրուն, եթէ լրագրի նեղ էջերը թոյլ տային այդ: Ուստի բաւարարուենք այսքանով նշելով, որ Ապրիլի Խորհուրդը զարթոնք ապրելով այն ժամանակ, շարունակուեց մինչեւ մեր օրերը, հետապու էլ պէտք է վառ պահենք այն նոր սերունդի միջոցով մինչեւ հայի պահանջատիրութիւնը իր արդար լուծումը գտնի:


«Զոկատը, որ կոչում էր Մեծն Մուրատ» գիրքը նոր էջ է բացում Արցախի ազատագրական պայքարի աննկուն ու հայրենիքին նուիրուած կամաւորների սիրագործութիւնների մասին, որոնք չնայած կորցրին իրենց ընկերների մեծ մասը, սակայն գլուխները բարձր, յաղթական քայլելով, Մեծ Եղեռնից յետոյ առաջին անգամ լինելով աւետեցին հայի յաղթանակը նենգ թշնամու դէմ՝ արցախեան պատերազմի յաղթական աւարտը, մաքրելով հայրենի հողը անարգ ցեղասպաններից:

Հեղինակը՝ Գրիգոր Զանկեանը վառ գոյնեղով ու հետաքրքիր մօտեցումներով է ծանօթացնում ընթերցողին Չոկատի իւրաքանչիւր անդամին: Գիրքը կարդացում է մէկ շնչով:

Պատահական չէր, որ Արցախում ազատագրական պայքարի ջատագով կամաւորները իրենց Չոկատները կնքում էին ֆեղայիների անուններով: Վերջիններիս հայրենիքին նուիրուած անսակարկ կեանքը ոգեւորում էր նրանց իրենց յաղթանակների ճանապարհին, նրանք մտածում էին անարգ թշնամուն հայկական Սուրբ հողից մի օր շուտ վտարելու մասին:

Գէորգ Գեղամեանը իմ դիպլոմներին էր 1970-ականների սկզբներին եւ յաջողութեամբ պաշտպանեց դիպլոմը Պոլիտեխնիկ ինստիտուտում ու այդ առթիւ ճոխօրէն հիւրասիրեց մեր բաժնի բոլոր աշխատողներին: Այնուհետեւ երկար

### ՇՈՒՆԱՆԳԻՍ



ԳՐԻԳՈՐ ԼԱՉԻՆԵԱՆ

Ողբացեալ ԳՐԻԳՈՐ ԼԱՉԻՆԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առթիւ, Կիրակի, Ապրիլ 22, 2007ին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի յաւարտ Ս. Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 East Colorado Blvd., Pasadena, California, 91104:

#### Սգակիրներ

- Այրին Տիկ. Հռիփսիմէ Լաչինեան
- Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սոնա Լաչինեան
- Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Լուսին Լաչինեան
- Տէր եւ Տիկ. Յովիկ եւ Արմինէ Լաչինեան
- Տէր եւ Տիկ. Զոհրապ եւ Սեդա Պօղոսեան
- Այրի Տիկ. Վարդուհի Եաղլըճեան

Հոգեհանգստեան արարողութենէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Հ.Մ.Մ.ի «Սողանալեան» սրահին մէջ, 1060 N. Allen Ave., Pasadena:

Հանգուցեալը յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

տարիներ յետոյ՝ 1989 թ. Երեւանում նրան պատահականօրէն հանդիպեցի մի ընկերոջ տանը եւ մեր կապը վերականգնուեց:

Տարօնցի պապերի ազատագրական պայքարի ոգին ծնողների միջոցով փոխանցուել էր նրան եւ նա նուիրուեց այդ գործին: Չնայած առողջական աննախանձելի վիճակին, նա իր անձնական նախաձեռնութեամբ ու սուղ միջոցներով ստեղծում է «Մեծն Մուրատ» Չոկատը որի հրամանատարութիւնը վստահում է, լրատուական միջոցներից իրեն ծանօթ ԱՍԱԼԱ-յի 1984 թ. Փարիզի թուրքական հիւպատոսարանի գրաւման «Վան» գործողութեան փոխհրամանատար 28-ամեայ Գէորգ Գիւզէլեանին (պէլլանցիների արմատներից), որի հարազատների մի մասը 1946 թ. ներգաղթել էին հայրենիք ու բնակութիւն հաստատել էջմիածնի շրջանի Ոսկեհատ (նախկին 4-րդ Սովխոյ) գիւղում: Իր նպատակն իրագործելու համար Գէորգ Գեղամեանը մեկնում է Պէյրութ, ծանօթանում Գէորգ Գիւզէլեանի հետ, որը բանտից նոր էր ազատուել: Գէորգ Գիւզէլեանը Գէորգ Գեղամեանի հետ վերադառնում է Երեւան, այցելում իր հարազատներին եւ կազմակերպում է Չոկատը, ընտրելով հայրենասիրական ոգով վառուած կամաւորների, Ռազմիկ Մաղարեանին նշանակում է փոխհրամանատար: Չոկատին մասնակցում էին Հայաստանից ու սփիւռքի տարբեր երկրներից Հայերի Յեղասպանութիւնից մազապուրծ ազատուած սերունդների հայրենիքին նուիրուած զաւակները, որոնք եր-

բեք չմոռացան իրենց նահատակուած պապերի յիշատակը եւ Հայաստանի կործանիչ երկրաշարժի, շրջափակման պայմաններում, էներգիայի ու ուսելիքի նեղ պաշարներով, մէկ բռունցք կազմած՝ ֆեղայական ջոկատներով կերտեցին փառաւոր յաղթանակներ Արցախում եւ ապացուցեցին, որ հայ ժողովուրդը պատմութեան յարատեւ ճամբորդն է:

Զոկատը սկսում է ազատագրական պայքարն Արցախում իր ունեցած մի քանի հրացաններով: Այնուհետեւ մարտերում թշնամուց խլում է նոյնիսկ տանկ եւ անհաշիւ ռազմամթերք, որի մի մասը յանձնում է միւս ֆեղայական խմբերին, շարունակում է իր յաղթարշաւը ամենալուսնալուր կէտերում, մինչեւ վերջնական յաղթանակն ու փառքով պսակում իր անունը:

Ներկայ ժամանակում Ապրիլի խորհուրդը առաւել եւս թելադրում է մեզ, որ մեր արդար պայքարի ճանապարհին աւելի համախմբուենք ու միասնական ուժով դիմադրանք ամէն մի խոչնդոտող վտանգ, իրականացնելու համար մեր իրաւներն ու նպատակները:

Մեծ Եղեռնի 92-րդ տարելիցի առթիւ սգալով ու վառ պահելով հանդերձ նահատակների յիշատակը, իրական միասնութիւն ստեղծենք, առանց որի չենք կարող հասնել մեր նպատակներին:

Փառք մեր հայրենիքին ու իրենց արեան գնով Արցախի հայկական հողերը ազատագրած հերոսներին, հանգիստ հերոս-նահատակների շիրիմներին:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
**(200 ՇՈՒՆԱՆԳԻՍ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA**  
**ՇՆԱՉԱՅՆԵԼ**  
**(626) 797-7680 (626) 398-0506**

*Armenian Athletic Association Ladies Auxiliary  
proudly presents*


# *“Fan-tastic Fashion”*

*Ladies' & Gentlemen's  
Fashion Show Luncheon*

*Sunday, April 29, 2007 – Omni Hotel*

*251 South Olive Street, Los Angeles*

*10:30am Boutique / Social Hour • 12:30pm Luncheon / Fashion Show*



*Information & Reservations:*

*Garine 626-755-4773 [gdepoyan@hotmail.com](mailto:gdepoyan@hotmail.com)*

*Dzovig 626-429-8366 [vdkoro@yahoo.com](mailto:vdkoro@yahoo.com)*

*Donation \$75.00*